ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ԱՄՍԱԹԵՐԹ

ԵՐԱԺՇՏ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (168)

#12 դեկտեմբերի 2019

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Սոնա Հովհաննիսյան

«Հովեր» պետական կամերային երգչախմբի 2019 թվականի գործունեությունը 2

ԵՊԿ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՄԵՐԳԸ

ԵՊԿ սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժոր Նատալի Գալստյան

2

ԳԵՎՈՐԳ ԲՈՒԴԱՂՅԱՆԻ - 120- ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ

Գևորգ Բուդաղյանի ծննդյան 120-ամյակին նվիրված միջոցառման հյուրերը Ա. Սպենդիարյանի տուն-թանգարանի դահլիճում

8

ԵՊԿ մեներգեցողության բաժնի պրոֆեսոր Ռեբեկա Օզախյանի 2019 թվականի գործունեությունը

Սուսաննա Հակոբյան, Ռիտա Պետրոսյան, Կարինե Աղաջանյան, Ռեբեկա Օզախյան, կոնցերտմայստեր Գայանե Թորոսյան, Իզաբելլա Ավանեսյան, Կոմիտասի 150-ամյակին նվիրված համերգին Ա. Խաչատրյանի տուն-թանգարանում

11

ԽՈՐՎԱԹԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԵՐԵԿՈ

ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը Հայաստանում Խորվաթիայի արտակարգ և լիազոր Դեսպան Ալեքսանդր Սունկոյի, Հայաստանում Խորվաթիայի պատվավոր հյուպատոս Արտաշես Կազախեցյանի, ՀՀ-ում արտակարգ և լիազոր Դեսպանների, ՀՀ Ազգային ժողովից և գերատեսչություններից եկած հյուրերի հետ ԵՊԿ-ում

10

ԷՍՏՐԱԴԱՅԻՆ-ՋԱԶԱՅԻՆ ԱՄԲԻՈՆԸ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ

ԵՊԿ հետբուհական բարձրագույն կուրսեր Երվանդ Երզնկյան, Արմանուշ Հակոբյան, Լուսինե Կչոզյան, Մարտին Վարդազարյան, Նարինե Զարիֆյան, Իրինա Մալխասյան, Ռաիսա Մկրտչյան, ԵՊԿ էստրադային-ջազային ամբիոնի ուսանողների ավարտական համերգին Յանս ջազ ակումբում

5

Մարգարիտա Շահինյանի մեկ տարվա չեռքերումն ու հաղթանակը

«Դելփյան խաղեր» միջազգային մրցույթին հաղթած ուսանողների հետ, ք. Իրսկ, Մոսկվայի մարզ

7

✓ Հիշատակդ վառ, սիրելի պարոն Հովհաննես Մուրադյան 4

✓ Լուսինե Կչոյանի 2019 թ. գործունեությունը 6

✓ Վննա Բակունցի (երգեհոն) 2019 թ. ստեղծագործական գործունեությունը 7

✓ Մենք հարուստ ավանդույթ ունեցող աշխարհում երաժշտություն ունենք, Կոմիտաս ունենք... 9

✓ Լուսինե Գրիգորյանի կատարողական արվեստը 11

✓ 2019 թվականի տարեվերջյան ամփոփումներ 9,12

ԵՊԿ ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՄԵՐԳԸ

Դեկտեմբերի 12-ին, Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը կայացավ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի տարեվերջյան հաշվետու համերգը:

Հանդես եկան կոնսերվատորիայի՝ «Կոմիտաս» երգչախումբը, խմբավար Գայանե Սահակյան, մագիստրատուրայի ուսանողներից կազմված կամերային նվագախումբը դիրիժոր Արամ Թալալյան, սիմֆոնիկ նվագախումբը, դիրիժոր Նատալի Գալստյան:

Հնչեցին Կոմիտասի, Յ. Ս. Բախի, Վ. Ա. Մոցարտի, Լ. Բոկկերինիի, Ֆ. Շուբերտի ստեղծագործություններից:

Կոմպոզիտոր Լևոն Չաուշյան, ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյան

ԵՊԿ կամերային նվագախումբ, դիրիժոր Արամ Թալալյան

«Կոմիտաս» երգչախումբ, խմբավար՝ Գայանե Սահակյան

ԵՊԿ հաշվետու համերգի հյուրեր, ԵՊԿ դասախոսներ, աշխատակիցներ և ուսանողներ

ԵՊԿ հաշվետու համերգի հյուրեր, ԵՊԿ դասախոսներ, աշխատակիցներ և ուսանողներ

Անահիտ Հակոբյան, Օլյա Նուրիջանյան, Դավիթ Ղազարյան

ԵՊԿ կամերային նվագախումբ, «Կոմիտաս» երգչախումբ դիրիժոր Արամ Թալալյան

Համերգն անցավ հաջողությամբ և բարձր մակարդակով:

Մասնակիցները հանդես եկան մեծ ոգևորությամբ և որակյալ կատարումներով:

Շնորհավորում ենք բոլոր մասնակից ուսանողներին, դասախոսներին ու կազմակերպիչներին հետաքրքիր ծրագրով և պատշաճ կերպով ներկայանալու համար:

Խմբագրական

«Հովեր» պետական կամերային երգչախմբի 2019 թվականի գործունեությունը

1

Մենահամերգներ՝ Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը (փետրվար 19), Բյուրականի երաժշտական ակադեմիայում (մայիս 22), Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը (հունիս 27), ԱՄՆ դեսպանատանը մասնակցություն ԱՄՆ-ի անկախության տոնին նվիրված տոնակատարությանը (հուլիսի 2),

Համերգային ծրագրերում՝ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում՝ Ճապոնիայի դեսպանության ընդունելությանը (փետրվար 22), Արամ Խաչատրյան համերգասրահում ՀՊՖՆ-ի հետ համատեղ (մարտ 3, 5), Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը՝ Համերգ նվիրված երաժշտագետ Զարուհի Տեր-Ղազարյանին (մայիսի 22), Վանաձոր՝ Կզարթմյանի անվ. երաժշտական դպրոց՝ Գ. Չթչյանի 90-ամյակին նվիրված համերգ (սեպտեմբեր 17), Գյումրի՝ Տեխնոլոգիական Կենտրոն Գ.Չթչյանի ծննդյան 90-ամյակին նվիրված համերգ (սեպտեմբեր 18), Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տուն **Մասնակցություն** Դավիթ Ղազարյանի հոբելյանական համերգին (հոկտեմբեր 13), Արամ Խաչատրյան համերգասրահում՝ նվիրված «Կոմիտաս» կվարտետի 95-ամյակին (նոյեմբերի 16), Արամ Խաչատրյան համերգասրահ՝ ՀՊՖՆ հետ համատեղ (հոկտեմբեր 18), Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայում՝ Տարեմուտի համերգ (դեկտեմբեր 27):

Կոմիտասի ծննդյան 150-ամյակին ընդառաջ Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տուն (ապրիլ 11), ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն **մարզային մենահամերգ** (մայիս 17), Գառնի Կոմիտաս - Թումանյան 150 կամերային նվագախմբի հետ համատեղ համերգ դիրիժոր՝ Վ.Մարտիրոսյան (հուլիս 14), ՀԲԸՄ Հայաստանի ցուցասրահ «Կոմիտաս» Անի Հովակի գործերի անհատական ցուցահանդես (սեպտեմբեր 24), Ա. Սպենդիարյանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Մասնակցություն «Կոմիտաս» փառատոնին (սեպտեմբեր 26-ին ծննդյան օրը), Արցախ, Ստեփանակերտ **մենահամերգ** (հոկտեմբեր 1) «Կոմիտաս» փառատոնի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակին ընդառաջ, Արցախ Գանձասար Մենահամերգ «Կոմիտաս» փառատոնի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակին ընդառաջ (հոկտեմբեր 2), Տաթևի վանք նվիրված Կոմիտասի 150-ամյակին «Ավրորա» ֆորումի շրջանակներում (հոկտեմբեր 21), մենահամերգ Մյունխենում (նոյեմբեր 29):

Հայաստանի հանրային ռադիո **ձայնագրություններ** հեռուստատեսային տեսահոլովակների համար (մարտ 21): Հուլիսի 3, 22, 23, 29 Հայաստանի հանրային ռադիոյի ձայնագրման ստուդիայում ձայնագրություններ ռադիոյի ոսկեֆոնդի համար: Նկարահանումներ են եղել՝ Հայաստանի հանրային ռադիո (փետրվար 20):

Միջոցառումների մասնակցություն հրավերով՝ Ամերիկյան համալսարան մասնակցություն «ԲիԲիՍի» համաշխարհային ծառայության *«World Questions»* հանրային բանավեճի նկարահանումներին (փետրվար 5), Ֆրանկոֆոնիայի համերգաշարին Վանաձոր, Դեբեդ (ապրիլ 20), Բյուրական Արտ Ստուդիո «Արտ Ստուդիոյի» բացման արարողությանը (հուլիս 27), Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տուն՝ Թեքեյան կենտրոնի 72-ամյակի միջոցառմանը (սեպտեմբեր 6), Գեղարդի վանք՝ ՀՀ Արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպված «Մշակութային երկխոսություն» (սեպտեմբեր 13), ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա Իտալական երգչախմբի հետ ինտերնետային համերգ (սեպտեմբեր 24), ՀԲԸՄ Հայաստանի ցուցասրահ «Հովեր» օկտետի ելույթ «Երևանյան գրքի» փառատոնի շրջանակներում (նոյեմբերի 24), Բրյուսել (դեկտեմբեր 1):

Հրատարակման համար պատրաստեց
ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆԸ

3

«ՀՈՎԵՐ». ՀԱԳԵՑԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎՍ ՄԵԿ ՏԱՐԻ

2

Նոյեմբերի 29-ին, Մյունխենի հեղինակավոր *Allerheiligen-Hofkirche* համերգասրահում կայացավ համերգ« նվիրված Կոմիտաս Վարդապետի ծննդյան 150-ամյա հոբելյանին: Համերգի կազմակերպիչներն էին ԳԴՀ Բավարիա երկրամասի գիտության և արվեստի նախարարությունը, «*Europamusicale*» մշակութային կազմակերպությունը (համերգի պատասխանատու՝ Արմինե Բաբայան), ԳԴՀ-ում ՀՀ դեսպանությունը և Բավարիա երկրամասում ՀՀ պատվավոր հյուպատոսը:

Համերգի ընթացքում հանդես եկան «Հովեր» պետական կամերային երգչախումբը՝ խմբավար, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ռեկտոր Սոնա Հովհաննիսյանի ղեկավարությամբ և բեռլինաբնակ հայտնի թավջութակահար Միքայել Հախնազարյանը: Համերգից առաջ ողջույնի խոսքով հանդես եկան *«Europamusicale»* կազմակերպության խորհրդի նախագահ դոկտոր Մարթին Շթայնմայերը և ԳԴՀ-ում ՀՀ Դեսպան Աշոտ Սմբատյանը: Իր խոսքում դեսպանն ընդգծեց, որ «Հովեր» երգչախումբն արդեն ավելի քան 25 տարի միջազգային տարբեր բեմահարթակներում ցուցադրել է իր կատարողական բարձր մակարդակը:

Այս առիթով և սիրելի երգչախմբի գործունեության տարեվերջյան մի ամփոփում անելու համար զրուցել ենք երգչախմբի խմբավար, Երևանի կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆեսոր Սոնա Հովհաննիսյանի հետ.

«Երկու ժամից փոքր-ինչ ավել տևած մյունխենյան համերգի առաջին բաժնում հնչել են բացառապես Կոմիտասի խմբերգային ստեղծագործությունները, երկրորդ բաժնում՝ հայ ժամանակակից կոմպոզիտորների և արևմտաեվրոպական խմբերգային արվեստի նմուշներ: Մասնավորապես 40 տարվա ընդմիջումից հետո կրկին հնչել է Արգաս Ոսկանյանի «Ապրել, ապրել» խմբերգը: Վաչե Շարաֆյանի «Նե» խմբերգը, որ կատարվում է զանգերի ուղեկցությամբ, հայեցողական, նուրբ ժանյակավոր ֆակտուրայով, իր ոչ շատ կանոնավոր շնչառությամբ, որի մեջ կարծես ցրված է ժամանակը, ևս տպավորիչ հնչեց:

Հովերի կազմում ձևավորված իգական «Լե» կազմով՝ Նարինե Ոսկանյանի ղեկավարությամբ, հնչել է նաև կոմպոզիտոր Աննա Ազիզյանի, «Կուկուն կու գօնչա գու» խմբերգը, համշենական երգի մի մշակում, որն ուղեկցվում է ֆլեյտայի, հարվածայինների նվագակցությամբ, վառվռուն, պոլիռիթմիկ զարգացումներով մի ստեղծագործություն, որը կրկին ջերմորեն ընդունվեց:

Տեղի է ունեցավ նաև երիտասարդ կոմպոզիտոր Հակոբ Մազլումյանի «Լռություն» ստեղծագործության պրեմիերան՝ գրված թավջութակի և երգչախմբի համար:

Երիտասարդ կոմպոզիտորը Հայրենիք է տեղափոխվել Եգիպտոսից, այժմ ուսանում է Երևանի Կոմիտասի անվ. կոնսերվատորիայի մագիստրատուրայում: Տարիներ առաջ կոմպոզիտորն առաջին մրցանակ է ստացել նաև ուսանողական կոմպոզիտորական մրցույթում՝ արժանանալով հատուկ ուշադրության: Դեռևս մեկ տարի առաջ երիտասարդ կոմպոզիտորին առաջարկվեց գրել խմբերգային ստեղծագործություն երգչախմբի համար, իսկ ստեղծագործության կատարումը Մյունխենում հաստատապես նոր խթան կհանդիսանա կոմպոզիտորի համար:

Համերգային ծրագրում «Լե» իգական կազմի կատարմամբ հնչել են նաև Պենդերեցկու «Սանկտուս» և Մուրեյ Շաֆերի «Ձյան ձևեր» ստեղծագործությունները:

Նոյեմբերի 30-ին երգչախումբը Բելգիայի հայ մշակութային կենտրոնի հրավերով և հայ համայնքի ջանքերով հանդես եկավ Բրյուսելի Սուրբ Միքայել Մայր տաճարում «հնչեցնելով Կոմիտասի, Մեսրոպ Մաշտոցի, Շարաֆյանի, Աննա Ազիզյանի ստեղծագործությունները, նաև Մուրեյ Շաֆերի «Miniwanka or The moments of Water» ստեղծագործությունը, որ ջրային տարերքի հավերժության պատկեր է ներկայացնում: Բելգիայի ունկնդիրն առանձնացավ իր ջերմ ու հետաքրքրված արձագանքով:

Ընդհանրապես, 2019 թվականի գործունեությունը ևս հարուստ էր համերգներով, ձայնագրություններով:

Ամենակարևոր նախագծերից էր Հանրային ռադիոյի ոսկե ֆոնդի նախաձեռնությամբ Կոմիտասի Պատարագի վերստին ձայնագրությունը, ինչը կյանքի կոչվեց նաև երգչախմբի նոր արական կազմի շնորհիվ, որտեղ ընդգրկված են բացառիկ օժտվածությամբ երիտասարդ երգիչներ, մասնավորապես Ակսել Դավեյանը (բարիտոն) և Արամո Մամիկոնյանը (լիրիկական տենոր):

Աննախադեպ էին այս տարի երգչախմբի համերգները մարզերում, Վանաձորում և Գյումրիում ունեցանք երկու համերգ՝ նվիրված կոմպոզիտոր Գեղունի Չթչյանի 90-ամյակին: Ի դեպ, Գյումրիում երգչախումբը ելույթ էր ունենում առաջին անգամ: «Ավրորայի» շրջանակներում ունեցանք հոգևոր երաժշտության համերգ Տաթևում, Կոմիտասի 150-ամյակի առթիվ երկու համերգ էլ հնչեց Արցախում, մի քանի ելույթներ էլ՝ Բյուրականի երաժշտական ակադեմիայում:

ՀՀ արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ ՄԱԿ-ի շրջանակներում տեղի ունեցավ համերգ Գեղարդում: Ծրագրում ընդգրկված ստեղծագործությունները երբևէ չէին հնչել Հայաստանում: Այդ ստեղծագործությունները 2017-ին հնչել են ԱՄՆ-ում, Նյու Յորքի, «Ալիս Թուլ» համերգասրահում. ամերիկաբնակ երաժիշտ Վարդան Օվսեփյանի մասնակցությամբ, և քանի որ այս տարի Վարդանն այցելեց Հայաստան, առիթ եղավ այդ ծրագիրը կատարել նաև այստեղ:

Հնչեցին նաև Վահագն Հայրապետյանի երկու մշակումները երգչախմբի հետ, Արմեն Հյուսնունցի, ինչպես նաև երգչախմբի բաս Վահագն Բաբլոյանի մշակումները:

Բացի այդ, Գառնիում ևս «Թումանյան-Կոմիտաս-150» հոբելյանի շրջանակներում կայացավ կամերային երաժշտության ազգային կենտրոնի կազմում գործող կոլեկտիվների միացյալ համերգը, որտեղ կոմիտասյան հատվածը կատարում էր Հայաստանի կամերային երգչախումբը (գեղարվեստական ղեկավար՝ Ռոբերտ Մլքեյան), իսկ թումանյանական խոսքերով նվագախմբի և երգչախմբի համար գրված ստեղծագործությունները՝ «Հովեր»ը:

Այս տարի կայացավ նաև բեռլինաբնակ կոմպոզիտոր և դիրիժոր Ալեքսանդր Իրադյանի «Testimonium» (Վկայություն) ստեղծագործության պրեմիերան՝ հեղինակի ղեկավարությամբ, դաշնակահար Արմեն-Լևոն Մանասերյանի և կամերային նվագախմբի հետ միասին:

Խոսելով երգչախմբի կազմում ընդգրկված նոր երիտասարդ ուժերի մասին, պետք է առանձնակի նշել, որ հատկապես այսօրվա արական կազմի շնորհիվ որպես խմբավար ես ավելի հանգիստ եմ զգում, կազմը շատ ավելի ամուր է, մեծ վստահություն ունեմ իրենց ուժերի և նախաձեռնության վրա, ծերբազատվել եմ անհանգստությունից, ինչը թույլ է տալիս համերգները ավելի հետաքրքրական կազմակերպել:

Բացի վերը նշված երիտասարդներից« մեծ դերակատարում ունեն մենեղգիչներ Ամալյա Թորոսյանը (սոպրանո) և Նարինե Ոսկանյանը (սոպրանո), որն ինձ հետ կիսում է խմբավարի պարտականությունները: Բացառիկ անսամբլիստներ են Կիմ Սարգսյանը (բարիտոն), Էդգար Վարոսյանը (տենոր): Ալտերի ձայնաբաժնում մենակատարումներով հանդես է գալիս նաև ֆլեյտահար, նկարչուհի Անի Հովակը՝ հաճախ նաև նվագակցելով երգչախմբին: Առանձնահատուկ ուզում եմ շեշտել Վահագն Բաբլոյանի (բաս) գործունեությունը, որի սեփական մշակումները հարստացնում են «Հովերի» երկացանկը:

Ուզում եմ նշել, որ երգչախմբի անդամները տիրապետում են և՛ մենակատարային, և՛ անսամբլային երգեցողության անհրաժեշտ երգչական որակներին: Ընդհանրապես, խմբերգային կազմում կարևոր է յուրաքանչյուր մարդու ինքնուրույնությունը, անսամբլային հմտությունները, որոնց շատ մենակատարներ չեն տիրապետում:

Կարող եմ ասել, որ երգչախումբն ամեն տարի ունենում է իր նոր գույնը, նոր ծրագիրը. ինչպես նույն ջուրը չես մտնի, այնպես էլ երգչախումբը տարեցտարի, ամեն նոր մարդու հետ ունենում է իր նոր երանգը: Յուրաքանչյուր նոր անդամ իր հետ բերում է նոր հնարավորություն և, նույնիսկ, ծրագիրը կազմվում է. հաշվի առնելով կոնկրետ երգչին, նրա ունակություններն ու հնարավորությունը: Ձայնը ինքն է թելադրում ծրագիրը:

Գալով երգչախմբի առաջիկա անելիքներին՝ պետք է նշել, որ ավանդույթի համաձայն, նորից կլինի տարեվերջյան մի «անլուրջ համերգ» (հիշեցնենք, որ վերջին տարիներին «Հովերի» տարեմուտի համերգները հենց այս վերնագիրն են կրում), որտեղ կներկայացվեն նոր մշակումներ:

2020 թվականի հունվարի կեսից արդեն Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի պատվերով և նախաձեռնությամբ «Հովերի» արական համալրված կազմը (մոտ 30 երգիչ) ներգրավված է մի հետաքրքրական նախագծում՝ Իտալիայում կայանալիք Շոստակովիչի 13-րդ սիմֆոնիայի կատարմանը:

Եվ, իհարկե, մեր գործունեությունը հնարավոր չէ առանց հովանավորչական աջակցության, և ուզում եմ նշել, որ «Հովերը» այժմ հովանավորվում է «Իմ քայլը» հիմնադրամի կողմից, որի հետ համագործակցությունը և փոխադարձ կապը առավել քան սերտ է, և առանց հիմնադրամի ուղղակի անհնար է պատկերացնել երգչախմբի գործունեությունը:

Խորին շնորհակալություն եմ ուզում հայտնել նաև «Վիվասել ՄՏՍ»-ին և նրա տնօրեն Ռալֆ Յիրիկյանին, որն այսքան տարիներ հովանավորել է երգչախմբին, և անհնար է մոռանալ այն հսկայական աջակցությունը, որ ունեցել է «Վիվասելը» հայ մշակույթի, մասնավորապես «Հովերի» կայացման գործում:

Ունենք արդեն տարիներ ի վեր կայացած համագործակցություններ կամերային նվագախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Վահան Մարտիրոսյանի, և իհարկե, Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Էդուարդ Թոփչյանի հետ: Սահուն և փոխկապակցված է ընթանում համագործակցությունը նաև կոնսերվատորիայի հետ...»

Ավարտելով մեր զրույցը Սոնա Հովհաննիսյանի հետ՝ ընթերցողին հիշեցնեմ, որ «Հովեր» երգչախումը դեռևս հեռավոր 1992-ին կազմավորվել է Սոնա Հովհաննիսյանի անհատական նախաձեռնությամբ և իր շուրջը հավաքել համախոհ երգիչների: Յուրօրինակ աշխարհայացքի, քրտնաջան ու հետևողական աշխատանքի շնորհիվ կարճ ժամանակում երգչախումբը ձեռք է բերել պրոֆեսիոնալ բարձր մակարդակ, մինչև օրս հանդես գալով միջազգային հեղինակավոր բեմերում:

Զարմանալի ներդաշնակությամբ են Սոնա Հովհաննիսյան անհատի մեջ միավորվել մարդկային և մասնագիտական որակները. նա հմայում է իր գաղափարի շուրջ մարդկանց համախմբելու, ոգեշնչելու, կենսական էներգիա ներարկելու կարողությամբ, ինչպես նաև տաղանդավոր երաժշտին բնորոշ ներընմբռնողական զգայականությամբ, աշխարհին բաց նայելու, թարմ և թրթռուն մոտեցմամբ աչքի ընկնող ստեղծագործական մեկնաբանումներով:

«Հովերը» վառ անհատականությունների միավորում է: Յուրաքանչյուր արտիստ օժտված է միմյանց հետ փոխգործակցության, ապրումակցման հզոր ունակություններով: Երգչախումբը գործում է ինչպես մի կենդանի օրգանիզմ՝ բնականորեն ստեղծելով իր ներքին ռիթմը, կոլորիտն ու միջավայրը: Յուրաքանչյուր երգիչ իր ուսերին է կրում իր մոտեցման և ձայնի հնչողական պատասխանատվությունը՝ ստեղծելով միայն իրեն հատուկ հնչերանգը և նրբորեն միահյուսելով այն անսամբլի հնչողական կուռ արխիտեկտոնիկայի մեջ:

«Հովեր» պետական կամերային երգչախումբը Մյունխենում

Յուրօրինակ փորձարարական դաշտը, որ ստեղծվել է երգչախմբում տարիներ ի վեր, թույլ է տվել իրականացնել ժամանակի և մեր մշակութային միջավայրի համար համարձակ և անսովոր նախագծեր: Բավական է հիշել Ստեփան Բաբաթորոսյանի «Առակները», որը որակվել է որպես «խմբերգային թատրոն», Աննա Ազիզյանի «Զուգահեռ» խմբերգային ներկայացումը և շատ ուրիշ փորձարարություններ, որոնք առնվազն ուշագրավ են եղել:

Առանձնահատուկ գայթակղությամբ, հմայքով և մեկնաբանման յուրօրինակ լուծումներով են հնչել ժամանակակից բազմաթիվ հեղինակների խմբերգային ստեղծագործությունները, արդի երաժշտության այնպիսի ռահվիրաների, ինչպիսիք են Քշիշտոֆ Պենդերեցկին, Ռոդիոն Շչեդրինը, Սոֆյա Գուբայդուլինան, Գիա Կանչելին և այլք: Սկզբնավորման օրից «Հովերը» հանդիսացել է հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղծագործությունների առաջին մեկնաբանն ու կատարողը նպաստելով հայ ավանդական և ժամանակակից երաժշտության ճանաչմանն ամբողջ աշխարհում...

ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ
ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ - ՄՇԱԿՈՒՅԹ #47, 13-12-2019

Արամ Խաչատրյանի միջազգային 7-րդ փառատոնի մեկնարկը

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, դիրիժոր Սերգեյ Սմբատյան, մենակատար Մաքսիմ Վենգերով

1 Այս տարեմուտի մշակութային բացառիկ համերգային երեկոն տեղի ունեցավ դեկտեմբերի 14-ին, Ա. Խաչատրյանի միջազգային փառատոնի մեկնարկով: Այս միջազգային փառատոնը հիմնադրվել է 2013 թ., երբ ամբողջ աշխարհը նշում էր հայ մեծանուն կոմպոզիտորի՝ Ա. Խաչատրյանի ծննդյան 110-ամյա հոբելյանը: Այս առնչությամբ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը (2017 թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ կառավրության որոշմամբ «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ») հանդես եկավ Ա. Խաչատրյանի անվ. միջազգային փառատոնի իրականացման նախաձեռնությամբ, որը մեկ ծրագրի շրջանակում պետք է միավորեր մշակութային բազում միջոցառումներ, վարպետության դասեր, դասախոսություններ և այլն: Այս տարվա փառատոնի բացմանը հատուկ հյուր էր աշխարհահռչակ ջութակահար, «Գրեմի» մրցանակակիր, ազգությամբ իսրայելցի Մաքսիմ Վենգերովը: Փառատոնի բացման համերգային ծրագիրը հետևյալն էր. 1-ին բաժնում Ջոն Տէր-Թադևոսյանի սիմֆոնիա N. 2 «Մարդու ճակատագիրը» (ըստ Մ. Շոլոխովի պատմվածքի ընթերցման), իսկ 2-րդ բաժնում Մաքսիմ Բրուխի ջութակի Կոնցերտ N.1 սոլ-մինոր, երկ. 26, Մորիս Ռավելի «Գնչուհի» Կոնցերտ-Ռապսոդիա ջութակի և նվագախմբի համար: Համերգի մենակատարն էր՝ Մաքսիմ Վենգերովը, և դիրիժորն էր ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Սերգեյ Սմբատյանը:

Ողջունելի է այն փաստը, որ համերգին կատարվեց XX դարի կոմպոզիտոր, ՀՍԽՀ արվեստի վաստակավոր գործիչ, փայլուն սիմֆոնիստ Ջոն Տէր-Տադևոսյանի N. 2-րդ սիմֆոնիան, որը գրվել է 1959 թ. և հանդիսացել է իր դիպլոմային աշխատանքը: Ի դեպ, նշենք, որ Ջոն Տէր-Թադևոսյանը հեղինակ է 5 սիմֆոնիայի, 3 կոնցերտի, 4 լարային կվարտետի, մի շարք սիմֆոնիկ պոեմների, սյուիտների, գործիքային պիեսների, ռոմանսների, ինչպես նաև կինոֆիլմերի երաժշտության:

Համերգին հնչած թիվ 2-րդ ծրագրային սիմֆոնիան, որի սյուժեն ներկայացնում է Հայրենական մեծ պատերազմը, օտարությունը՝ մի մարդու ճակատագիր ով ստիպված թողել է իր ընտանիքը և մեկնել է ռազմաճակատ: Կորցնելով իր ընտանիքը, նա վերջում գտնում է մի տղայի, ասելով որ նա կլինի իր հայրը, դրանով իսկ նոր կյանքի հույս առաջացնում: Սիմֆոնիան բաղկացած է 5 մասից, հեղինակը առաջին մասը անվանել է պրոլոգ, իսկ վերջին հինգերորդը՝ էպիլոգ: Սիմֆոնիան առանձնահատուկ է իր գունային հարուստ հնչողությամբ, տեմբրերի բազմազանությամբ և իհարկե ձևակառուցմամբ: Վստահ կարող եմ ասել, որ այս փառատոնի շրջանակում նշված սիմֆոնայի կատարումը երբևիցե հնչած, մեր կողմից լսված լավագույն կատարում էր: Ցանկալի կլիներ, որպեսզի հանրությանը ներկայացվեր անվանի կոմպոզիտորի մյուս ստեղծագործությունները, որոնք ևս իրենցից պակաս արժեք չեն ներկայացնում:

Համերգի մյուս բաժնում հնչեցին XX դարի Գերմանացի կոմպոզիտոր Մաքս Բրուխի ջութակի N. 1 սոլ-մինոր Կոնցերտը և XIX դարի ֆրանսիացի կոմպոզիտոր Մորիս Ռավելի «Գնչուհի» Կոնցերտ-Ռապսոդիան ջութակի և նվագախմբի համար, մենակատարն էր Մաքսիմ Վենգերովը: Մ. Բրուխի եռամաս կոնցերտը իր մեջ պաունակում է ռոմանտիկական դարաշրջանին հատուկ զգացմունքներ, որոնք փոխանցվեցին հանդիսատեսին մենակատարի հիասքանչ, նրբերանգ և վիրտուոզ կատարման շնորհիվ, որն էլ արժանացավ բուռն ծափահարությունների: Իսկ Ռավելի երկմաս ծրագրային Կոնցերտ-Ռապսոդիան ունկնդրին տեղափոխեց միանգամայն այլ իրականություն, ռիթմիկ շարժման և կրքոտ երաժշտական ելևեջների միջոցով: Ինչ խոսք, Մ. Վենգերովը գտնվում էր կատարյալ բարձրունքում, իր փայլուն կատարողականությամբ, արտիստիզմով: Համերգի վերջում նա իր շնորհակալական խոսքն ասաց Հայաստանին և հայ ունկնդրին՝ մասնավորապես իր ընկերոջը՝ Ս. Սմբատյանին, կատարելով Բախի հանրահայտ Ադաջոն՝ նվիրելով այն աշխարհի բոլոր փոքրիկներին:

ԼԻՆԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ
ԵՊԿ երաժշտագիտության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի

Հիշատակդ վառ, սիրելի պարոն Հովհաննես Մուրադյան

Հովհաննես Մուրադյան

Տարիներ են անցնում և թվում է, թե մեր սիրելիները մեզ հետ միշտ են լինելու, թե ամեն օր աշխատավայրում միմյանց տեսնելու, հաճելի ներկայությունը վայելելու: Ու հանգիստ լինելու, որ նրանք մեր առօրյայում են ու մեր կողքին, նույնիսկ թոշակավորվելուց հետո պարոն Հովհաննեսը շարունակում էր մեր աշխատանքներին աջակցել խորհուրդներով, ուղղել, սրբագրել: Այո սրբագրում էր բառիս բուն և լայն փոխաբերական իմաստով: Հարազատ իր արմատներին, լեզվին, ոսկեղենիկ հայերենին: Տիրապետում էր կատարյալ՝ թե՛ արևելահայերենին, և՛ թե արևմտահայերենին, իսկ գրաբարին վերաբերում էր խոնարհությամբ ու մեծարանքով, որն այնքան գեղեցիկ և հզոր է, որ միայն աղոթել կարելի է: Հարգարժան, իսկ իր համար կային որդիական սիրով լցված հոգևորականներ և մի առիթով նույնիսկ Արք. Նավասարդ սրբազանին ասաց. «Եթե ես որդի ունենայի կուզենայի Դուք լինեիք»:

Մինչև 14 տարեկանն ապրել է Հունաստանում՝ Սալոնիկում (ծ. 27.11.1934 թ.), Մելքոնյան վարժարանում սովորելով ու եկեղեցում դպիր լինելով, ծառայելով ինչպես շատ սփյուռքահայ պատանիներ, լինելով եղբայրը՝ հայտնի մելքոնյանական բյուզանդագետ, բանասեր Արուսյակ Մուրադյանի (երեք համադասարանցիներ հայտնի մտավորականներ՝ Նիկողոս Թահմիզյանի և Կարպիս Սուրենյանի հետ, որոնք Բրյուսել էին նշանակվել շարունակելու ուսումը փոխարենն ընտրեցին Հայրենիքը և ներգաղթեցին իրենց ամբողջ ընտանիքներով): Համեստորեն և խոնարհաբար, որ իր նկարագիրն էր, փաստում էր. *«Ոչ Արուսյակն առավել է, ինքն է մելքոնյանական» ես ընդամենը խմբագիր եմ,* - կատակում էր, որը նույնպես նրա անբաժան նկարագիրն է ավելացնում էր *«մեքենագրուհի եմ աշխատում»,* այնուհետև ճշգրտում մտցրեց այդ ասույթում. *«ռադիոյում երիտասարդ տարիներին»,* երբ ասում էի «Ի՞նչ է պարոն Հովհաննես մեքենագրողները միայն կանայք են»: Պատասխանում էր. *«Ոչ մեքենագրուհի է միայն,*- ու ժպտում էր, երբ ավելի մտեցմացանք կոնսերվատորիայում արդեն աշխատելու տարիներին, երբ միայն խմբագրում ու սրբագրում էր, առանց մոտենալու համարկարգչին ասաց. *«դիսերտացիաներ էի մեքենագրում ապրել էր պետք»,* - դա վերաբերվում էր 50-ականներին:

Պարոն Հովհաննեսը կատարյալ էր տիրապետում հայերենին և, երբ անհրաժեշտ էր լինում բարձրաստիճան հոգևորականությանն ուղերձ գրել միմիայն պարոն Հովհաննեսին էի դիմում և նրանից սովորում, չնայած որ գրաբար էի սովորել երեք տարի Խորեն Պալյանի՝ իր լավ բարեկամի մոտ, պարոն Հովհաննեսը հաճախ կրկնում էր լեզուն միշտ սովորելու, հղկման, ուսումնասիրելու կարիք ունի և ավելացնում էր *«ինչպես ռուսն է ասում. «**Век живи, век учись...**» և էլ չենք շարունակում»* ու ժպտում բազմանշանակ: Ռուսերենին գերազանց տիրապետում էր, բայց չէր սիրում և ասում էր «ռսերեն» ռ-ն շեշտված, այն դեպքում, որ կինը Նելլին ռուսախոս էր և ռուսական կրթությամբ: Ինքը՝ 41 տարի շարունակ ռադիոյում ղեկավարում էր արտասահմանյան երաժշտության բաժինը և բոլոր տոներին, խորհրդային շրջանում, ականատես եմ եղել և հետագայում, նույնպես հատկապես Հայրենական պատերազմի մասին բոլոր համերգների և հաղորդումների պատասխանատուն էր, գրում և անգիր գիտեր ու սիրում էր երգել Հայրենական պատերազմի երգերը, և շատ թարգմանություններ էր կատարում ռուսերենից հայերեն: Ես զարմացած հարցրեցի, բայց ինչու չեք սիրում լեզուն ու այդքան լավ գիտեք: Մի անգամ պատասխանեց շշուկով. *«Եկել ենք Հայրենիք հայերեն լեզուն ամենուրեք լսելու համար, ոչ թե այլ լեզվով խոսելու: Արևոտ ծովի երկիրը թողեցինք եկանք, սովի ու դժվար կյանքով ապրեցինք այստեղ, ինչ դժվարություններ ասես, որ չքաշեցինք: Ընդամենը 14 տարեկան էի, մի օրը հայրիկիս ասացի. «Հայր, այս ուր ես ինձ բերել»: Ու դուրս եկա տանից գլուխս կախ, գնացի ոտքով ու չգիտեմ ուր էի հասել, արդեն քաղաքից դուրս էի եկել, մի կին ինձ կանգնեցրեց ու ասաց, որ տուն ետ վերադառնամ, արդեն մթնշաղ էր, ետ եկա,* - ու ինձ բացատրելով նայեց ու ասաց, - *Խենթ ու խելառ երիտասարդություն է, չես մտածում: Երիտասարդությունն այդպիսին է»:* Հարցրեցի, բայց ու՞ր էիք գնում, ասաց Հունաստան ու ժպտաց, դա 90-ականների մեր խոսակցությունն էր ռադիոյում, իսկ երբ շատ տարիներ անց դուստրը՝ Արշալույսը իրեն նվեր մատուցեց միասին ճամփորդության գնացին Հունաստան և վերադարձան 2016-ին էր: Տպավորություններն էր կիսում, հարցրեցի, թե պարոն Հովհաննես փոշմանե՞լ եք, որ այնտեղ չեք մնացել, պատասխանեց. *«Ոչ Հայրենիքը լավ է, նրանք մեզ նման են ապրում ու ուրիշ էր, իմ իմացած ու պատկերացումներիս մեջ մնացած Հունաստանը չէր, երեխա էինք: Ճիշտ է արել հայրիկս, որ մեզ Հայրենիք է բերել»:* Այնքան երախտապարտ էր դրա համար դստերն ու հայրիկին: Նաև քրոջը, որ ծանոթացրել էր Նելլի հետ և ընտանիք էր կազմել այդքան սիրասուն ու գեղեցիկ ընտանիք և իրեն այդ պահից համարել երջանիկ մարդ:

Չքնաղ որդի էր պարոն Հովհաննեսը իր ծնողների և գերազանց եղբայր՝ Արուսյակի համար, մինչև վերջ անունը տալուց աչքերը թացանում էին վաղամեռիկ քրոջ համար: Բարիության մարմնացում էր, արդարամիտ ու խորհուրդներն առ այսօր հիշում եմ: Մի անգամ ինձ ասաց. *«Ինքնուրույն լավություն մի արա, երբ կխնդրեն նոր արա, թե չէ չեն հասկանում ու գնահատում, միշտ հիշիր Ավետիք Իսահակյանի խոսքը. «Լավություն եմ արե՞լ քեզ, որ վատություն ես անում»:* Հետո ավելացրեց, - *կարծում եմ դա արևելյան ասույթ է,* որ ինքն էր սիրում կրկնել:

Ես անվերջ կարող եմ պարոն Հովհաննեսի մասին գրել ու հիշել, ճանաչում եմ նրան 1994 թվականի մարտից, երբ ընդունվեցի ՀՀ ռադիո երաժշտական հաղորդումների գլխավոր խմբագրության, իր ղեկավարած արտասահմանյան երաժշտության բաժինն աշխատանքի: Անմիջապես մտերմացանք, որովհետև նա շատ բարեկիրթ անձնավորություն էր, այնուհետև ես նկատեցի, որ ռադիոյում բոլորն անուններով և բացի այդ «իկ» վերջածացով են դիմում նրան, դասախոսական միջավայրից հետո խորթ էր ինձ թվում ու ես ասացի, որ «Ձեզ անունով չեմ կարող դիմել, ես ձեզ պարոն Հովհաննես եմ ասելու»: Այդ օրից ինձնից հետո ընդունվող բոլոր աշխատողները և մշտապես 1994-ից, պարոն Հովհաննես կոչեցին, ինքն էլ դա մի քանի տարի հետո ընդվզելուց հետո ընդունեց: Իսկ երբ 2004-ին հրավիրեցի ու առաջարկեցի նրա թեկնածությունը Ս. Գ. Սարաջյանին, նա զարմացած ասաց. *«Բաժնի վարիչ է մեծահասակ ու վաստակաշատ պարոն Հովհաննեսը, կհամաձայնվի՞ գա մեզ մոտ»:* Այո, և՛ համաձայնվեց, ընդունվեց, նոր էինք հիմնադրել և՛ ի պատիվ և՛ Սարաջյանին, և՛ նրանից առաջ՝ Արմեն Սմբատյանին, ում հետ պարոն Հովհաննեսը ռադիոյում երկար տարիներ աշխատել էր 80-ականներին (Ա.Սմբատյանը Երաժշտական խմբերի և գլխավոր խմբագրության տնօրեն էր երկար տարիներ) հիմնադրած խմբագրությունում և կոնսերվատորիայի նորաբաց հրատարակչությունում աշխատանքի հրավիրում էին այն կադրերին, ում տողերիս հեղինակը նախընտրում էր և ասում էին դու պետք է աշխատես, քանի որ գիտես խմբագրի աշխատանքի դժվարությունները: 2004-ի սեպտեմբերի առաջին օրերին, երբ Արաքսի Սարյանը այցելեց հրատարակչություն և տեսավ ընտրագույն կազմը ու պարոն Հովհաննեսին, որի ղեկավարությամբ ռադիոյում ինքն էլ էր աշխատել, ուրախությամբ իրեն հատուկ հումորով ասաց. *«Հովհաննես ջան ամբողջ ռահոյում բոլորիս խմբագրեցիր, հիմա էլ կոնսերվատորայում»* ու շատ ուրախացավ: Ու ամեն անգամ ջերմությամբ և հետագայմ էլ երկու անգամ, Ղազարոս Սարյանին նվիրված «Երաժշտական Հայաստան» ամսագրի երկու տարբեր տարիների համարների շնորհանդեսներ կազմակերպեց Սարյանների տուն-թանգարանում: Առաջինը՝ 2005-ին հենց ծննդյան օրը, սեպտեմբերին, Մարտիրոս Սարյանի արվեստանոցում, մենք հասկացանք, որ կայացանք Երևանի սրտում: Հետաքրքիր էր և Մարտին Վարդազարյանի հետ նրանց մտերմությունը, որպես գրական հումորով մարդկանց:

Լուսավոր անձ և լուսավոր հոգի պարոն Հովհաննեսը:

ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ
«ԵՊԿ հրատարակչության» հրատարակիչ

«ԵՊԿ հրատարակչության» այցելությունը Արարատյան հայրապետական թեմի Առաջնորդի Տ. Նավասարդ արք. Կճոյանի օրհնությունը ստանալու (2014-ի հոկտեմբերի 10-ին), Վալենտին Թովմասյան (2005-2014-ը Հրատարակչության բաժնի վարիչ, «Երաժշտական Հայաստան» ամսագրի պատասխանատու քարտուղար), Հովհաննես Մուրադյան («ԵՊԿ հրատարակչության» խմբագիր, սրբագրիչ, և «Երաժշտական Հայաստան» և «Երաժիշտ» ամսաթերթի), Գոհար Շագոյան, Սոֆա Ազնաուրյան, Ջեմմա Գասպարյան, Արմինե Աթոյան

ԷՍՏՐԱԴԱՅԻՆ-ՋԱԶԱՅԻՆ ԱՄԲԻՈՆԸ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ

«Երաժիշտ» ամսաթերթը և կոնսերվատորիայի բաժին «ԵՊԿ հրատարակչությունը» հրավիրում է բոլոր ամբիոնների վարիչներին իրենց 2019 թ. հետաքրքիր ամփոփիչ գործունեությունը ներկայացնել հրատարակման ամսաթերթի հաջորդ համարում: Ստորև ներկայացնում ենք էստրադային-ջազային ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, կոմպոզիտոր Մովսես Խորենացի մեդալակիր Նարինե Զարիֆյանի ներկայացրած նյութերը 2019 թվականի գիտաստեղծագործական, մեթոդական աշխատանքների, համերգային գործունեության մասին:

Խմբագրական

Ֆրանսիական դեսպանատան հետ համատեղ համերգ ԵՊԿ-ում, ներկա էին Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան կուլտուր-ատաշեն՝ Ալեքս Բոլթոնը, Երևանի Ֆրանսիական դպրոցի նախկին տնօրենը

Ֆրանսիական մասնագիտացված դպրոցում ԵՊԿ էստրադային-ջազային ամբիոնի ուսանողների ելույթը Ֆրանսիական դեսպանատան հետ համատեղ, որին ներկա էր նաև Ֆրանսիայի Դեսպանը

1 ԵՊԿ էստրադային-ջազային ամբիոնում աշխատում են պրոֆեսորներ՝ ՀՀ ժողովրդական արտիստներ Մարտին Վարդազարյանը, Երվանդ Երզնկյանը, Ռաիսա Մկրտչյանը, Մովսես Խորենացի մեդալակիր Նարինե Զարիֆյանը, կոնցերտմայստեր, դաշնակահար Գեորգի Ղասաբյանը, դոցենտներ՝ Արմանուշ Հակոբյանը, Էմմա Պետրոսյանը, Մարիա Մացակյանը, Լուսինե Կչոզյանը, դասախոսներ՝ Գեորգի Մանգասարյանը, Իրինա Մալխասյանը, Էմմա Ասատրյանը, Քրիստինե Պեպելյանը, Ալբերտ Հովհաննիսյանը՝նա նաև արվեստագիտության թեկնածու է: Ամբիոնում աշխատում են նաև կոնցերտմայստերներ՝ Նունե Արզումանյանը, Սոֆի Միքայելյանը:

Տեղեկության համար ասենք, որ բաժնի ուսանողական կազմը հետևյալն է. ընդամենը 68 ուսանող, որոնցից 54-ը՝ բակալավր, 6-ը՝ մագիստրոս, 6-ը՝ նախապատրաստական կուրսից և 2-ը՝ հետբուհական բարձրագույն կուրսեր: Նրանցից 21-ը արտերկրներից են:

2019-2020 թթ. ուսումնական տարում ԵՊԿ էստրադային-ջազային ամբիոնի ամփոփիչ ատեստավորումներին նախատեսվում է 19 ուսանողի մասնակցությունը, որոնցից 15-ը՝ բակալավրական և 2-ը՝ մագիստրոսական և 2-ը՝ հետբուհական բարձրագույն կուրսեր ավարտող:

Ամբիոնի ուսանողներից երկուսը ներգրավված է ԵՊԿ Գիտխորհրդում:

Ընթերցողին հետաքրքիր է իմանալ ԵՊԿ էստրադային-ջազային ամբիոնում դասավանդվող դասընթացները. 2018-2019 ուսումնական տարում ԵՊԿ էստրադային-ջազային ամբիոնում դասավանդվում էին հետևյալ դասընթացները.

1. Մասնագիտություն (բակալավրականում)
2. Մասնագիտություն (մագիստրոսականում)
3. Գործիքագիտություն (բակալավրականում)
4. Ջազային հարմոնիա (բակալավրականում)
5. Սոլֆեջջո (բակալավրականում)
6.Ջազային իմպրովիզացիա (բակալավրականում և մագիստրոսականում)
7. Ջազային անսամբլ (բակալավրականում և մագիստրոսականում)
8. Ջազ երաժշտության պատմություն (բակալավրականում)
9. Դասավանդման մեթոդիկայի հիմունքներ (բակալավրականում)
10. Ոճական առանձնահատկությունները փոփ երաժշտության մեջ (մագիստրոսականում)

2019-2020 ուսումնական տարում՝ ուսումնական պլանի փոփոխության հետ կապված, տեղի են ունեցել որոշակի ավելացումներ, այն է.

11. Ջազային կոմպոզիցիա
12. Թերթից ընթերցում
13. Ջազային երաժշտության ոճեր

2020-2021 ուսումնական տարվանից սկսած նախատեսվում է Ջազ բենդի և Ջազ երգչախմբի հիմնադրում:

2019 թվականի ընթացքում ամբիոնում տեղի են ունեցել հետևյալ կարևոր փոփոխությունները.

- Հաստատվել են բակալավրականի և մագիստրոսականի նոր ուսումնական պլանները, որոնք վերջնական հանձնված են ԵՊԿ ուսումնական գծով պրոռեկտորին:

Վերափոխվել, հաստատվել և երաշխավորվել է ամբիոնի կողմից հետևյալ դասընթացների առարկայական ծրագրերը և էստրադային-ջազային ամբիոնի վերջնապահանջները:

Կազմվել և ամբիոնի հաստատումն են անցել, երաշխավորվել գիտական խորհրդում հաստատման համար Գործիքագիտություն (բակալավրական), Բաս կիթառ (բակալավրական), Ջազային իմպրովիզացիա (բակալավրական), Հարվածային գործիքներ (բակալավրական), Դաշնամուրային կատարողականություն, նվագակցություն, թերթից ընթերցում (բակալավրական), Մեներգեցողություն (բակալավրական և մագիստրոսական) դասընթացների ծրագրերը:

Ընթացքում է մագիստրոսական թեզերի պաշտպանության ընթացակարգի կազմումը, դասավանդվող մնացած դասընթացների առարկայական ծրագրերի վերափոխումը, ինչպես նաև նոր դասընթացների առարկայական ծրագրերի ստեղծումը, կազմվել և հաստատվել է ամբիոնի դասախոսների գիտամանկավարժական աշխատանքի տարեկան հաշվետվության ձևաչափը, նոր առարկայական ծրագրերի համաձայն՝ հստակեցվել կամ փոփոխվել է որոշ ստուգումների անցկացման կարգը:

Այսպես, բակալավրական ամփոփիչ ատեստավորումն այսուհետ պետք է պարունակի նաև հետևյալ բաղադրիչները կատարողական առանձնահատկությունների տեխնիկական համապատասխանությունը, կատարողական առոգանության առանձնահատկությունը, ոճի զգացողությունը, ստեղծագործությունների բարդության համապատասխանությունն ըստ ծրագրի, մագիստրոսական թեզերի պաշտպանությունը նախատեսված է անցկացնել հանդիսատեսի համար բաց ձևաչափով, տարեվերջի մասնագիտական քննություններին ներկայացվող բոլոր ստեղծագործությունների բաց համերգային կատարում և այլն:

Հստակեցվել են քննական հանձնաժողովների կազմերի պահանջները, ինչպես նաև սեփական դասարանի ուսանողներին գնահատելու վերաբերյալ կոլեգիալ էթիկայի նորմերը: Ամբիոնի դասախոսները տեղեկացվել են 2020 թ-ի փետրվարից-հունիս ընթացքում ակնկալվող դասալսումների վերաբերյալ: Նախապատրաստական կուրսի ուսանողներին առաջարկվել է ըստ իրենց ցանկության ընտրել ուսման ձևաչափերից մեկը՝ կա՛մ Մասնագիտություն դասընթացն անցնել մեկ դասախոսի ղեկավարությամբ, կա՛մ նախապատրաստական տարվա ընթացքում այցելել տարբեր բոլոր դասախոսների մասնագիտական դասարանները՝ դասավանդման մեթոդներին լավագույնս ծանոթանալու համար: Ամբիոնի նիստերի արձանագրությունները սկսել են պահպանվել էլեկտրոնային ձևաչափով:

Լուծվել է նաև տարածքային հարցը՝ համերգային դահլիճ, ամբիոնի սենյակ, 1 լսարան ուսումնական գործընթացը կազմակերպելու նպատակով, որի համար շնորհակալություն ենք հայտնում ղեկավարությանը: Դրա շնորհիվ հնարավոր է դարձել ամբիոնում հիմնադրելու ձայնադարան և գրադարան:

Անցկացվել է ուսանողների 4 համերգ, որոնցից 3-ը Ֆրանսիական դեսպանության հետ համագործակցությամբ: Գրեթե բոլոր համերգները լուսաբանվել են «Երաժիշտ» ամսաթերթում:

Ստեղծվել է դասախոսների և ուսանողների էլեկտրոնային փոստերի ցանկ:

Տարվա ընթացքում ապրիլի 3-ի N 3 ամբիոնի նիստում քննարկվեց ԵՊԿ Գիտական խորհրդի կողմից ներկայացված ռազմամշակութային պլանը, որի համաձայն որոշվեց, որ ամբիոնում չկա և անհրաժեշտ են հարվածային գործիքներ, պուլտեր, միկրոֆոններ, կիթառի կուբիկ, մոնիտոր և այլն:

Ամբիոնում կատարվում է դասախոսների մասնագիտական գործունեությանը վերաբերվող մի շարք աշխատանքներ. 2019 թ-ի դեկտեմբերին դասախոսների ներկայացրած տարեկան հաշվետվությունների համար, նոյեմբերին ամբիոնի դասախոսներին բաժանվել են հատուկ հարցաթերթիկներ, որտեղ կետ առ կետ նշված են մասնագիտական գործունեության տարբեր տեսակները, գիտական և գիտամանկավարժական աշխատանք, հոդվածներ և ուսումնասիրություններ, նոր ստեղծագործություններ, ստեղծագործությունների պրեմիերաներ, հեղինակային համերգներ, բաց դասախոսություններ, ատենախոսությունների համար գրախոսություններ և ղեկավարում և ընդդիմախոսություն, հրատարակված նոտաներ կամ ժողովածուներ և այլն:

Ամբիոնի դասախոսներից շատերը ակտիվորեն գործում են և ստեղծագործում են, պրոֆեսիոնալ կոմպոզիտորների առկայությամբ: Դասախոսների ստեղծագործությունները և կատարումները հաճախ հնչում են Հայաստանում և արտերկրում: Մյուս կողմից, դասախոսների միայն փոքր մասն է զբաղվում գիտական աշխատանքով: Սա մի բաց է, որը հետագայում կարիք ունի լրացման:

Կան նաև որոշ խնդիրներ. դրանցից են՝ նախապատրաստական կուրսի ուսանողների գիտելիքների հաճախ անբավարար մակարդակը: Այն պատճառով, որ նախապատրաստական կուրս անցած արտասահմանցի ուսանողները պաշտոնապես կարող են առաջին կուրս տեղափոխվել սոսկ մասնագիտությունից անցկացվող քննությամբ, նրանց տեսական գիտելիքների մակարդակը հաճախ չի համապատասխանում ուսումնական ծրագրերի պահանջներին:

Այս խնդրի լուծումը հնարավոր է երեք տարբերակով.

1. ԵՊԿ-ի ղեկավարությանն առաջարկել վերանայել Փոփ-Ջազային մասնագիտությամբ նախապատրաստական կուրս ընդունվելու կարգը՝ պահանջների մեջ ներառելով երաժշտության տեսության և սոլֆեջջոյի հիմունքների լավ իմացություն:

2. ԵՊԿ ամբիոնի դասախոսի հետ դասալսումներով և խորհրդատվություն ամբիոնի վարիչի և կոմպոզիտոր պրոֆեսորների հետ համատեղ աշխատելով, վեր հանել և վերացնել նախապատրաստական կուրսում դասավանդվող տեսական դասընթացների թերություններն ու բացերը:

3. Բակալավրական կրթության 1-ին կուրս ընդունելուց առաջ ստուգել ուսանողների տեսական գիտելիքները:

Ուսանողների հաշվետու համերգները իրականացնելը բարդությունների հետ է կապված, քանի որ չունենք տեխնիկական սարքավորումներ, դրանք տրվում են վարձակալությամբ բարձր գներով: Այս խնդրի լուծումը բարդ է, քանի որ, ամեն ինչից զատ կապված է նաև ֆինանսական հարցերի հետ: Անհրաժեշտ է աշխատել ԵՊԿ ղեկավարության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ խնդրի լուծման հնարավոր եղանակները քննարկելու համար:

- Չեն անցկացվում ուսանողների կողմից դասընթացների գնահատումներ *(student course evaluations)*:

- Այս տարի էստրադային-ջազային ամբիոնն ընդունելության քննությունների արդյունքում տեսական առարկաներից անբավարար ստացած դիմորդների ընդամենը 10 հոգի մտահոգության տեղիք տվեցին դասավանդվող տեսական առակաների նկատմամբ տարվա ընթացքում լինել հետևողական դասալսումների և խորհրդատվության կարգով նաև պրակտիկ գործառույթներում: Այդ խնդրի մասնակի լուծմանն էր ուղղված նախապատրաստական կուրսում 6 ուսանողներին (վերը նշած 10 դիմորդներից) տրված գիտելիքները:

Էստրադաին-ջազային ամբիոնի դասախոսները քիչ են զբաղվում գիտական աշխատանքով: 2019 թ. ամբիոնի դասախոսներից միայն 4 կոմպոզիտորներից մեկն է մասնակցել արտագնա և բուհական գիտաժողովների և գիտական հոդված է տպագրել, 1 կոմպոզիտոր հրատարակել է 2 նոտային մեթոդական ժողովածու բուհերի ուսանողների և մասնագետների համար: Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը ուսումնամեթոդական 6 ծրագրերի հեղինակ է: Գիտական աշխատանքի պլատֆորմը ակտիվացնել և ստեղծել ամբիոնի դասախոսների գիտաժողովներում ներգրավումը, ինչպես նաև դասախոսական կազմը համալրվել է ևս մեկ երիտասարդ շրջանավարտ մասնագետներով:

2020 թ. ամբիոնի աշխատանքի հիմնական նախատեսվող ուղղությունները.

Դասավանդման որակի բարելավում և վերահսկում, խորհրդատվություն, դասալսումների, լավագույն ջազային ստեղծագործության կատարման մրցույթի կազմակերպում: Դասախոսների համատեղ աշխատանքի հնարավորությունների ընդլայնում: Շարունակել, քննական հանձնաժողովների կազմերում ռոտացիայի սկզբունքով ներգրավելու ճանապարհը:

Համագործակցություն ԵՊԿ այլ, մասնավորապես շարունակել Կատարողական արվեստի պատմության, մանկավարժության, մեթոդաբանության ամբիոնի նաև լուսաբանման համար և գիտական հրատարակումների «ԵՊԿ հրատարակչության» հետ, ստեղծել համագործակցություն՝ Փողային գործիքների ամբիոնի, ԵՊԿ սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի նաև փողային նվագախմբի հետ՝ ուսման ընդհանուր որակի բարձրացման և ուսանողների կատարումներն ապահովելու համար:

2020 թ. բակալավրական ամփոփիչ ատեստավորումներն ըստ ձևավորված ավանդույթի անցկացնել Յանս ջազ ակումբում, ինչպես նաև առաջին անգամ իրականացնել մագիստրոսական թեզերի բաց պաշտպանություններ, որի համար պետք է տարվի համապատասխան նախապատրաստական աշխատանք:

ՆԱՐԻՆԵ ԶԱՐԻՖՅԱՆ
Պրոֆեսոր, կոմպոզիտոր, ամբիոնի վարիչ

Լուսինե Կչոզյանի 2019 թ. գործունեությունը

Լուսինե Կչոզյան

Լուսինե Կչոզյանն իր ուսանողների հետ՝ Հասմիկ Հայրապետյան, Մարիամ Առաքելյան, Լուսինե Կչոզյան, Հովսեփ Աբրահամյան, Գայանե Վարդանյան, Քերոբ Հովելյան

Գորիսի Մանկական երաժշտական դպրոցում (ՄԵԴ), Արամ Սաթյանի հետ

1 ԵՊԿ դոցենտ, Հանրային Ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի մենակատար Լուսինե Կչոզյանը Բուլղարիայում կայացած *«Sofia-Grand prix»* միջազգային մրցույթ-փառատոնին ստացել է 3 մրցանակ՝ 1-ին մրցանակների՝ համաշխարհային հիթ, Folk էստրադային մշակում նոմինացիաներում և *«Grand prix»*ի՝ ջազ նոմինացիայում:

Գավառի ՄԵԴ-ում

Աշտարակի Արտեմի Այվազյանի անվ. ՄԵԴ-ում

Նա հանդիսացել է *Art music* մրցույթ-փառատոնի և *Golden Voice* միջազգային մրցույթ-փառատոնի հանձնախմբերի անդամ, «Զվարթնոց վերածնունդ հայ ազգային երգիչ» մրցույթ-փառատոնի հանձնաժողովի անդամ, էստրադային բաժնի պատասխանատու:

Նոյեմբերի 22-ին կատարողական 3-րդ հայկական մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է տարվա լավագույն ջազ երգչուհու կոչման:

Հոկտեմբերի 7-ին կայացել է իր ձայնագրությամբ «Հայրենիք» 1-ին տեսահոլովակի պրեմիերայի ցուցադրումը:

Շնորհավորենք Լ. Կչոզյանին՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում:

ԵՊԿ դեցենտ Լուսինե Կչոզյանը սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 8-ը ՀՀ մարզերում հանդես է եկել հայ կոմպոզիտորների՝ Արամ Սաթյանի, Մարտին Վարդազարյանի, Էդգար Գյանջումյանի, Կոստանտին Օրբելյանի, Առնո Բաբաջանյանի ստեղծագործությունների կատարումներով՝ «Մենք և մենք» խորագիրը կրող մարզային համերգաշարի շրջանակներում, որը կազմակերպվել էր ՀՀ գիտության, կրթության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ, ՀՀ կոմպոզիտորների միության նախաձեռնությամբ:

Նոյեմբերի 22-ին *«Golden Voice»* միջազգային մրցույթ-փառատոնին մասնակցել են և արժանացել տարբեր մրցանակների Լ. Կչոզյանի ուսանողներից՝ Քերոբ Հովելյանը (բակալավրական 3-րդ կուրս) ջազ նոմինացիայում՝ 1-ին մրցանակ, Հասմիկ Հայրապետյանը (բակալավրական 2-րդ մրցանակ) համաշխարհային հիթ նոմինացիայում՝ 1-ին մրցանակների. Մարիամ Առաքելյանը (բակալավրական 3-րդ կուրս) ջազ նոմինացիայում՝ 1-ին, իսկ համաշխարհային հիթ նոմինացիայում՝ *Grand prix* մրցանակների, Հովսեփ Աբրահամյանը համաշխարհային հիթ նոմինացիայում՝ *Grand prix* և Գայանե Վարդանյանը համաշխարհային հիթ նոմինացիայում *Grand prix* մրցանակի:

Հրատարակման համար պատրաստեց
ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

Տալլինում կազմակերպվել է համերգ՝ նվիրված Ավետ Տերտերյանի 90-ամյակին

ՀՀ դեսպանությունը Էստոնիայում՝ Տալլինում, Սևագլուխների տանը, նոյեմբերի 25-ին կազմակերպել էր համերգ նվիրված՝ հայ մեծանուն կոմպոզիտոր Ավետ Տերտերյանի ծննդյան 90-ամյակին:

Միջոցառմանը ներկա էին Էստոնիայի օրենսդիր և գործադիր մարմինների և պետական տարբեր գերատեսչությունների բարձրաստիճան պաշտոնյաներ, Տալլինում հավատարմագրված Դեսպաններ, դիվանագիտական կորպուսի անդամներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Համերգին բացման խոսքով հանդես եկավ Էստոնիայում ՀՀ արտակարգ և լիազոր Դեսպան Տիգրան Մկրտչյանն, ով իր խոսքում նշեց. *«Իսկապես դժվար է Տերտերյանին մի քանի բառով նկարագրելը: Նա մեկն էր, ով իր ծնողների՝ Բաքվում գտնվող տանը տեսել է Պրոկոֆևին, իսկ հետո, երբ արդեն ձևավորված կոմպոզիտոր էր Դմիտրի Շոստակովիչը շռայլ գովասանքի խոսքեր հնչեցրեց նրա հասցեին: Տերտերյանը, ինչպես ցանկացած ժամանակաշրջանի ցանկացած այլ տաղանդավոր կոմպոզիտոր, զարգացման մի քանի փուլ է անցել: Այստեղ, այս համերգի ընթացքում, մենք կներկայացնենք նրա գործունեության վաղ շրջանում գրված, ռոմանսներ, երգեր ինչպես նաև դաշնամուրի և ձայնի համար այլ հայկական և բալթյան ստեղծագործություններ:*

Ավետ Տերտերյանի ծննդյան 90-ամյակին նվիրված համերգ Էստոնիայում Միջազգային մրցույթների դափնեկիր, դաշնակահարուհի Արմինե Գրիգորյան

Սակայն միանշանակ նրա սիմֆոնիաներն են, որ նրան աշխարհահռչակ դարձրեցին: Նա ավանգարդ երաժշտություն ներկայացնող կոմպոզիտոր էր, որում միաձուլվում էին ազգային և հոգևոր մեղեդիների տարրերը: Սա բացառիկ համադրություն է, որը ներկայացնում է տերտերյանական ոճի բարդությունն ու յուրահատկությունը: Հազվադեպ է լինում, որ այդ տարրերը ներկայացված են մեկում: Նրա սիմֆոնիաներում օգտագործվում են հայկական ազգային գործիքներ, ներառյալ դուդուկը և զուռնան: Նրա տիեզերական երաժշտությունը սահմաններ չի ճանաչում: Այն անհատին թողնում է միայնակ Աստծո առջև կամ Աստծո կողքին:

Այս տարի աշխարհասփյուռ հայությունը նշում է հայ մեծ հոգևորական և կոմպոզիտոր Կոմիտասի, ինչպես նաև գրող-բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյակները: Էստոնիայում, փետրվարին մի մեծ համերգ կազմակերպեցինք Գյուրջիևի անսամբլի հետ միասին, իսկ այնուհետև սեպտեմբերին կազմակերպեցինք Էստոնիայի պետական արական երգչախմբի համերգը Արվո Պյարտի կենտրոնում, նշելով Կոմիտասի 150 ամյակը: Ավելին, մյուս տարվա մայիսին մենք ծրագրում ենք կազմակերպել մեկ այլ փառահեղ համերգ Էստոնիայի արական երգչախմբի հետ միասին, որով նախատեսում ենք հայերենով ներկայացնել Կոմիտասի Պատարագն ամբողջությամբ: Ինչ վերաբերում է Հովհաննես Թումանյանին, մենք թարգմանել ենք նրա հեքիաթները էստոներեն, սակայն ամենայն հավանականությամբ դրանք կհրատարակվեն և լույս կտեսնեն արդեն մյուս տարի այստեղ:

Հավատացած եմ, որ նույնիսկ այս երկու մեծ տարեդարձները չպետք է ստվերեն Ավետ Տերտերյանի հոբելյանը, իսկ այսօրվա միջոցառումը նպատակ ունի ցույց տալու, որ Տերտերյանն իր կարևոր տեղն ունի հայ մշակույթում: Այդ իսկ պատճառով, մենք Հայաստանից երկու հրաշալի երաժիշտների ենք հրավիրել: Արմինե Գրիգորյանը Երևանի Արամ Խաչատրյան թանգարանի տնօրենն է և Խաչատրյան տրիոյի անդամ: Նրա հետ մենք այս տարվա ապրիլին մեկ համերգ արդեն ունեցել ենք»:

Խմբագրական
Նյութը վերցված է
armenpress.am կայքից

Մարգարիտա Շահինյանի մեկ տարվա յեռֆբերումն ու հաղթանակը

«Դելփյան խաղեր» միջազգային մրցույթի հանձնախումբ

Սայաթ-Նովայի անվ. երաժշտական քոլեջում

Շուշիի արվեստի դպրոցում

Ստեփանակերտի Կոմիտասի անվ. դպրոցում, Վարպետության դասին

1 Բուռն ստեղծագործական կյանքով ապրող արվեստագետը (անկախ այլ և այլ հանգամանքներից) իրեն զգում է ինքնաբավարարված և երջանիկ: Չէ որ արվեստը ժամանակի մեջ առաջընթացի անիվն է և կյանքը գեղեցկացնող միակ գրավականը:

Ինչպես ամեն տարի 2019-ը նույնպես ինձ համար գործունեության ոչ պակաս հետաքրքիր ու բեղմնավոր տարի էր: Կոմիտասի ու Հ. Թումանյանի հոբելյանները զարդարելով այս տարվա օրացույցը մեծ կարևորություն հաղորդեցին մեր կյանքին: Անմասն չմնալով այս իրադարձություններին տարին պետք է յուրահատուկ դառնար ձեռքբերումներով և ստեղծագործական գործունեությամբ:

Մայիսի 13-ի դասարանական համերգը նվիրված էր Կոմիտասի 150 ամյակին: Տողերիս հեղինակի ուսանողները կատարեցին շուրջ 20 ստեղծագործություն թե ա կապելլա և թե՛ տարբեր նվագակցություններով: Համերգը տեղի ունեցավ Ա. Բաբաջանյանի երաժշտամանկավարժական քոլեջի «Բաբաջանյան և ընկերներ» համերգասրահում: Այն արժանացավ մեծ ջերմության և գնահատանքի ունկնդրի կողմից:

Ինձ համար յուրաքանչյուր օրը լցված է բեղուն աշխատանքով: Ուսումնական տարվա ավարտը ամփոփվում է քննություններով, իսկ հանձնաժողովում լինելը մեծ պատասխանատվություն է հատկապես ուսանողների հանդեպ անաչառության դիրքորոշման մեջ:

Ստեփանակերտի Սայաթ Նովայի անվ. երաժշտական քոլեջում, վարպետության դասից հետո

Շուշիի Մշակույթի նախարարի հետ, նախարարությունում

Աշունը սկսվեց ծրագրավորված և ակտիվ: Հոկտեմբերի 2-ից 5-ը Արցախի (Ստեփանակերտ Շուշի, Մարտունի) 15-ից 16-ը նոյեմբերյանի և Դիլիջանի ինչպես նաև հոկտեմբերի 25-ին երաժշտության և արվեստի դպրոցներում և քոլեջներում անցկացվեցին վարպետաց դասեր հայեցի երգեցողության և հայ երգի պահպանման և զարգեցման ուղղությամբ:

Այս կարևոր և անհրաժեշտ գործունեությունը չափազանց պահանջված է արդի երաժշտական կրթական հաստատություններում: Այս բնագավառում պրոֆեսիոնալ մասնագետների մեծ պակաս է զգացվում թե՛ Հայրենիքում, թե՛ Արցախում: Եղածն էլ կարիք ունի վերապատրաստվելու և իր մասնագիտական գիտելիքները խորացնելու: Յուրաքանչյուր վարպետաց դաս սաների համար անցնում էր մեծ հետաքրքրությամբ և սիրով, նվիրումով և պատասխանատվությամբ: Նրանց աչքերում հույսի և լույսի շողը հոգու թրթիռ է և ապագայի տեսլական:

Ես ուրախ ու գոհ եմ իմ արած գործից: Պետք է նշել, որ հաճախակի դասերի արդյունքում բազմաթիվ ուսանողներ համալրել են կոնսերվատորիայի մասնագիտական դասարանները:

Նոյեմբերի 22-26-ը ՌԴ-ում Իրսկ քաղաքում (Մոսկվայի մարզ) կայացավ «Դելփյան խաղեր» միջազգային մրցույթը: Հայաստանից որպես հանձնախմբի ժողովրդական երգի անվանակարգում հրավիրված էի, իսկ երգիչներ ընտրվեցին քոլեջի տողերիս հեղինակի դասարանում սովորող երեք ուսանող: Նրանցից երկուսը արժանացան դիպլոմների և գրավեցին պատվավոր տեղեր: Երկրորդ տեղն արծաթե մեդալ ստացավ չորրորդ կուրսից՝ Ելենա Շողունցը, իսկ երրորդ տեղը բրոնզե մեդալի՝ Հովհաննես Սարգսյանը (3-րդ կուրս): Սա մեծ հաղթանակ էր երիտասարդ կատարողների համար: Նրանց ուղին արվեստում որոշակիորեն ուրվագծվում է, իսկ դա ուսուցչի ձեռքբերումն է աշխատանքի արդյունքը, որն էլ երջանկացնում է նրան և մղում նորանոր ծրագրերի իրականացման:

Դեկտեմբերի 19-ի՝ համերգը նվիրված է Հ. Թումանյանի 150 ամյակին: Ուսանողները անհամբերությամբ սպասում և պատրաստվում էին ներկայանալու և տարեվերջյան հաշվետվությունը ամփոփելու:

Լիարժեք և արդյունավետ աշխատանքը միշտ տալիս է իր դրական պտուղը, որը տեսանելի է լեցուն քաղցր զգացումներով:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՇԱՀԻՆՅԱՆ
ԵՊԿ պրոֆեսոր

Վննա Բակունցի (երգեհոն) 2019 թ. ստեղծագործական գործունեությունը

1 *Կոմիտասի անվան կամերային երաժշտության ազգային կենտրոնում երգեհոնային համերգներ.*

Մարտի 23-ին՝ Երգեհոնային երաժշտության համերգ (Յոհան Սեբաստիան Բախ):

Ապրիլի 20-ին՝ Համերգ՝ նվիրված Վահագն Ստամբոլցյանի հիշատակին (Կոմիտաս, Եկմալյան, Բախ, Բուքստեհուդե):

Մայիսի 25-ին՝ «Երգեհոնային երաժշտության ժամ» (Կլերամբո, Պահելբել, Բախ, Բուքստեհուդե):

Մայիսի 26-ին՝ Համերգ՝ նվիրված մտավոր սեփականության միջազգային օրվան («Հայհեղինակ»):

Հունիսի 15-ին՝ ելույթ «Տաղարան» հնագույն երաժշտության անսամբլի հետ Հենդել, Կոնցերտ երգեհոնի և նվագախմբի համար, No.6 op.4:

Հունիսի 22-ին՝ «Երգեհոնային երաժշտության ժամ» (Բախ, Բրունս):

Հուլիսի 20-ին՝ «Երգեհոնային երաժշտության ժամ» (Տիգրան Բունիաթյան, Աննա Բակունց), (Բուքստեհուդե, Բախ):

Սեպտեմբերի 28-ին՝ Համերգ՝ նվիրված Կոմիտասի 150-ամյակին:

Հոկտեմբերի 26-ին՝ «Երգեհոնային երաժշտության ժամ»:

Նոյեմբերի 21-ին՝ ձայնագրության (CD) շնորհանդես, Ադամ Բարրո (բարիտոն, Ֆրանսիա), Աննա Բակունց (երգեհոն):

Նոյեմբերի 23-ին՝ «Երգեհոնային երաժշտության ժամ» (Բախ, Կոմիտաս)

Դեկտեմբերի 14-ին՝ «Երգեհոնային երաժշտության ժամ»:

ԱՆՆԱ ԲԱԿՈՒՆՑ
երգեհոնահար

ԵՊԿ երաժշտագետ ուսանողները Պորտուգալիայի Ավեյրու քաղաքի համալսարանում

2019 թվականի փետրվարից մինչ հունիս, էրազմուս ծրագրի շրջանակում առիթ ենք ունեցել ուսանելու Պորտուգալիայի Ավեյրու քաղաքի համալսարանում: Մեր ստացած գիտելիքները և փորձը այժմ փորձում ենք կիրառել մեր դիպլոմային աշխատանքում: Ավեյրուի համալսարանը տարբեր ինստիտուտներից բաղկացած կառույց է, որտեղ ուսանողները հնարավորություն ունեն ծանոթանալու բնագիտական, հումանիտար և այլ ոլորտի մասնագիտությունների հետ: Որպես երաժշտագետ մենք այնտեղ սովորում էինք էթնոերաժշտագիտություն, որը համարվում էր մասնագիտություն: Դրան զուգահեռ մենք ընտրել էինք Պորտուգալիայի ջազի պատմություն, երաժշտական էսթետիկա, վերլուծություն առարկաները: Բացի ակադեմիական դասերից ամեն շաբաթ անցկացվում էին սեմինարներ՝ նվիրված սոցիալական հիշողության և երաժշտության հետ կապին: Մենք նախօրոք ծանոթանում էինք նյութին, որից հետո ուսանողների ու գիտնականների հետ միասին մասնակցում էինք կլոր-սեղանի քննարկմանը: Դասերը ևս անցկացվում էին այս սկզբունքով: Կարելի է ասել, որ գրեթե բացակայում էր դասապրոցեսի անցկացման լեկցիոն տեսակը:

Համալսարանում սովորում էին տարբեր երկրների ուսանողներ, և ամեն շաբաթ որևէ երկրի ուսանող հնարավորություն էր ստանում մեծ դահլիճում ներկայացնել իր երկիրն ու մշակույթը: Մենք ևս անմասն չմնացինք այդ միջոցառումից և այլ հայ ուսանողների հետ ներկայացրեցինք Հայաստանը, հայկական մշակույթն ու արվեստը, խոհանոցն ու սովորույթները: Միջոցառման ավարտին ներկաները հնարավորություն ունեցան ճաշակելու դոլմա, տոլմա, հալվա և գաթա:

Վերադառնալով մասնագիտական հարցերին հարկ ենք համարում նշել նրանց ազգային երաժշտության հանդեպ ունեցած իրենց իսկ հետաքրքրությունը. անկախ ֆակուլտետից, բոլոր երաժիշտները խորը ուսումնասիրում են էթնոերաժշտագիտություն: Մենք բոլոր առարկաների ամփոփիչ ստուգարքների համար գրել էինք ամփոփիչ էսսեներ, որոնք որոշ չափով փորձել էինք կապել հայկական երաժշտության հետ: Այնտեղ մեծ հետաքրքրությամբ էին խոսում Արամ Խաչատրյանի մասին և խորը մասնագիտական գիտելիքներ ունեին նրա արվեստի հետ կապված: Մեծ էր մեր զարմանքը, երբ սիմֆոնիկ երաժշտության համերգներից մեկը սկսվեց Արամ Խաչատրյանի «Վալենսիայի այրին» սյուիտով:

Մեր ստացած տեսական գիտելիքների և պրակտիկ փորձի մասին հուսով ենք շուտով կխոսենք կոնսերվատորիայում կայանալիք գիտաժողովներից մեկի ընթացքում:

ՍՈՆԱ ՍԻՄՈՆՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ՄՈՒՂԱԼՅԱՆ
ԵՊԿ երաժշտագիտական բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներ

ԳԵՎՈՐԳ ԲՈՒԴԱՂՅԱՆԻ - 120- ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ

Ա. Սպենդիարյանի տուն-թանգարան

Անցնող 2019 թվականը նշանավորվեց մի շարք ականավոր երաժիշտների հոբելյաններով: Հոկտեմբերի 16-ին լրացավ հայ բազմակողմանի գործունեություն ծավալած՝ երաժշտական գործիչ, դիրիժոր, երաժշտագետ-հետազոտող, հրապարակախոս, մանկավարժ, պրոֆեսոր, Խորհրդային Հայաստանի Ժողովրդական արտիստ՝ Գևորգ Երվանդի Բուդաղյանի ծննդյան 120-ամյակը: Անգերազանցելի սպենդիարյանագետի և Ա. Սպենդիարյանի երկերի լավագույն մեկնաբանի հոբելյանը, ավանդույթի համաձայն, հանգամանալի անդրադարձ ունեցավ կոմպոզիտորի տուն-թանգարանում: Նրա կյանքի ուղին, գործունեության բազմազան ոլորտները և իհարկե, սպենդիարյանական արվեստի ուսումնասիրման ու տարածման պատմությունը ներկայացվեցին զեկույցի և լուսանկարների սլայդի տեսքով (բանախոս՝ տուն-թանգարանի գիտաշխատող, երաժշտագետ Հասմիկ Համբարյան): Դահլիճում զուգահեռաբար բացվեց ժամանակավոր ցուցադրություն, որում տեղ էին գտել մեծ երաժշտին առնչվող գրքերը, նրա խմբագրությամբ հրատարակված Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածուն և մաեստրոյի դիրիժորական ֆրակը: Զեկույցն ընդմիջվեց հայ կոմպոզիտորների, առավելապես՝ Սպենդիարյանի ստեղծագործություններից կազմված համերգային գողտրիկ ծրագրով, որն ապահովեցին երիտասարդ դաշնակահարուհի, հանրապետական և միջազգային մրցույթների մրցանակակիր Գայանե Ասլանյանը և Գ. Բուդաղյանի անվ. արվեստի դպրոցի սաները: Դպրոցի տնօրեն Սուսաննա Բարսեղյանը ողջույնի խոսքում ազդարարեց հոբելյանական միջոցառման շարունակությունն իրենց կրթօջախում՝ թանգարանի հետ մշակութային համագործակցության հրավերով: Գեորգի Երվանդի գործչին և անհատին հիշատակեցին տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանը, մաեստրոյի որդին՝ պրոֆեսոր Արմեն Բուդաղյանը և նրա սաներից՝ արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Ալինա Փահլևանյանը: Ցերեկույթը միավորել էր տարբեր սերնդի երաժիշտների, որոնք եկել էին միասին անմահացնելու մաեստրոյի հիշատակը:

Գայանե Ասլանյան

Արմեն Բուդաղյան

Մարինե Օթարյան

***

Գ. Ե. Բուդաղյանը ծնվել է 1899 թ-ի հոկտեմբերի 16-ին, Բաքվում: Ապագա մեծ երաժշտի հայրը՝ Երվանդ Ֆադեին բաժնետեր էր նավթաարդյունաբերական ընկերությունում: Բազմանդամ ընտանիքում, ցավոք, գլուխ բարձրացրեց ժառանգական թոքախտը, որը խլեց նախ հոր, ավելի ուշ՝ ավագ եղբոր և քրոջ կյանքերը: Մայրը՝ Մարիա Արտեմին, երեխաների համար լավ կրթություն ապահովելու նպատակով տեղափոխվեց Մոսկվա:

Գեորգիի ուսումնառությունն սկսվեց Մոսկվայի լավագույն ուսումնական հաստատություններից մեկում՝ Արևելյան լեզուների լազարյան ինստիտուտում, այլ կերպ ասած՝ Լազարյան ճեմարանում: Զուգահեռաբար նա երաժշտություն էր սովորում Գուստավ Շմիդտի մասնավոր դպրոցում և մասնակցում բոլոր հնարավոր համերգներին ու գրական-երաժշտական երեկոներին: Ուսումնական տարիներին արդեն իսկ դրսևորվում են նրա կազմակերպչական և հետազոտական հետաքրքրությունները: Նա դառնում է «Երիտասարդ Երաժիշտների Ընկերության» նախաձեռնողներից և ղեկավարներից մեկը: Այն հիմնվեց 1916-ին և միավորում էր Մոսկվայի պատանի երաժիշտներին:

1917-ի հեղափոխությունը և քաղաքացիական պատերազմը փոխեցին նաև Գեորգիի կյանքի ընթացքը: Նա սկսում է աշխատել Մոսկվայի Զամոսկվարեցկի շրջանի բնակարանային-հողամասային բաժնում: Անցնելով Կարմիր բանակի շարքերը՝ սովորում է զինվորական կամրջաշինարարություն և ծառայում Արևմտյան ճակատի դաշտա-զինվորական շինարարություններում: Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո Գեորգի Երվանդովիչը վերադառնում է Մոսկվա և ի վերջո, հայտնվում իր հետաքրքրություններին և շնորհին համապատասխան հաստատությունում՝ կոնսերվատորիայում: Ռեկտորի՝ կոմպոզիտոր Միխայիլ Իպոլիտով-Իվանովի խորհրդով, նա ընդունվում է Ֆերդինանդ Էկկերտի գալարափողի դասարան: Տեսական առարկաները նախընտրող և ստեղծագործական ջիղ ունեցող ուսանողին շուտով տեղափոխում են Սերգեյ Վասիլենկոյի կոմպոզիցիայի դասարան, բայց կարծես էլի ինչ-որ բան պակասում էր լիարժեք ինքնադրսևորման համար: Երիտասարդ երաժիշտն իր մասնագիտական հստակ ուղին պատկերացրեց և գտավ, երբ կոնսերվատորիայում բացվեց դիրիժորական դասարան: Ականավոր վարպետ Կոնստանտին Սարաջևի ղեկավարությամբ այս դասարանում սկսեցին ուսանել Գևորգ Բուդաղյանը, Բորիս Խայկինը, Լեո Գինզբուրգը, Գրիգորի Վանսլովը և ուրիշներ, որոնց անունները հետագայում կապվեցին առաջնակարգ դիրիժորական արվեստի հետ:

1922-ին Գեորգի Երվանդովիչն ընդգրկվեց Մոսկվայում Հայ մշակույթի տան աշխատանքներում: Սա խորհրդային հայկական մշակույթի զարգացման համար կարևորագույն մի օջախ էր: Նույն 22-ին սկիզբ առավ Մոսկվայի երաժշտական հաստատություններում ուսանող հայ երաժիշտների համատեղ գործունեությունը: Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտի նախկին շենքում ձևավորվեց երաժշտական խմբակ, որը հենց այդպես էլ կոչվեց՝ Մոսկվայի Հայ Երաժիշտների Կոլեկտիվ: Հիմնադիրներից էր հենց Բուդաղյանը, որն այն ղեկավարեց 1925-29 թթ-ին: Կազմակերպությունը միավորում էր տեղի հայերի ներուժը և նպաստում հայ-ռուսական ստեղծագործական կապերի հաստատմանն ու ամրապնդմանը:

Հայաստանի Լուսժողկոմի որոշմամբ պետական հրատարակչությանը կից ձևավորվեց երաժշտական բաժանմունք: Նոտաները հրատարակվում էին Մոսկվայում: Բուդաղյանը նշանակվեց Հայպետհրատ-ի՝ Մոսկվայի Հայ կուլտուրայի տան կից երաժշտական բաժանմունքի հանձնակատար: Մոսկվայի Հայ երաժիշտների կոլեկտիվը նույնպես իրավունք ունեցավ ստեղծելու կոլեգիա, որի անդամներն էին Բուդաղյանը, Քրիստափոր Քուշնարյանը, Մուշեղ Աղայանը և Լևոն Խաչատրյանը՝ Արամ Խաչատրյանի եղբայրը: Իհարկե, նրանք ձեռնամուխ եղան հայ կոմպոզիտորների մի շարք ստեղծագործությունների հրատարակմանը:

1929-ի սեպտեմբերին երիտասարդ երաժիշտը ճանապարհ ընկավ դեպի հայրենիք: Երևանի կոնսերվատորիա, որտեղ Բուդաղյանն սկսում է մանկավարժական գործունեությունը: Ընդամենը 6 տարի գործող երաժշտական բուհն արդեն ուներ սիմֆոնիկ նվագախումբ, օպերային դասարան, կոմպոզիտորական դասարանի ձևավորման նախադրյալներ: Գ. Բուդաղյանի կինը՝ Նինա Սաղիյանն իր հուշերում գրում է, որ Գեորգի Երվանդովիչը, իրենց՝ դաշնամուրային բաժնի ուսանողների հետ կամերային անսամբլի և գեղարվեստական նվագակցության դասընթացներն անցկացնում էր շատ հետաքրքրական կերպով: Բուդաղյանի նախաձեռնությամբ ստեղծվել էր սիմֆոնիկ երաժշտությունը 4 ձեռքի համար փոխադրությամբ կատարող ուսանողների խմբակ, որոնց հետ պարապում էր անձամբ: Մի անգամ Գեորգի Երվանդին երաժիշտ ընկերների հետ հյուրընկալվեց բժիշկ Գրիգորի Սաղիյանի տանը: Հանդիպումները դարձան մշտական, որոնց ընթացքում կատարվում էին մեծ թվով սիմֆոնիկ և օպերային երկեր՝ դաշնամուրի 4 ձեռքի համար փոխադրմամբ: Երաժշտական հանդիպումների մասնակիցներն այդ հավաքները կատակով անվանում էին «Երևանյան առաջին սիմֆոնիկ ընկերություն»:

Նինա Գրիգորևնան դարձավ դիրիժորի կինը, անբաժան օգնականը, նրա ավանդույթների շարունակողը կամերային երգեցողության դասարանում:

Երևանի կոնսերվատորիայում տարբեր տարիներին, երբեմն էլ նույնիսկ միաժամանակ Բուդաղյանը վարել է օպերային, նվագախմբային, օպերային-սիմֆոնիկ դիրիժորության, գեղարվեստական նվագակցության, կամերային երգեցողության, կամերային անսամբլի դասարանները, պարտիտուրների ընթերցման դասընթացը: 1934-36-ին և 1949-58-ին նա բուհի պրոռեկտորն էր գիտական և ուսումնական գծով: 1960-62-ին ղեկավարել է երաժշտության տեսության, պատմության և կոմպոզիցիայի ամբիոնը: Ասպիրանտուրայի բաժնի նախաձեռնողներից էր և ղեկավարներից:

Բուդաղյանը սիմֆոնիկ համերգների դիրիժոր - Մոսկվայի կոնսերվատորիայի 1-ին հայ դիրիժոր շրջանավարտին երևանյան կոնսերվատորիայում դիմավորեցին ջերմությամբ: Բուդաղյանի ղեկավարությամբ կոնսերվատորիայի նվագախումբը հաճախ սուղ ժամկետներում հագեցած և բովանդակալից ծրագիր էր պատրաստում:

1932-ին կոնսերվատորիայի նվագախմբի հիմքով կազմավորվեց Երևանի օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը, որը մշտապես ելույթներ էր ունենում ինքնուրույն սիմֆոնիկ ծրագրերով: Բուդաղյանը մեծապես նպաստեց այս երաժշտախմբի կայացմանն ու զարգացմանը: Նշենք նաև, որ Բուդաղյանը չէր մերժում իր պանծալի ուսուցչի՝ Կ. Սարաջևի հրավերները՝ ղեկավարելու վերջինիս ջանքերով 1941-ին հիմնված Հայֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի համերգները: Տարբեր առիթներով Բուդաղյանի շնորհիվ համերգային կյանք են ստացել Հարո Ստեփանյանի, Սարգիս Բարխուդարյանի, Գրիգոր Եղիազարյանի և այլ հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ երկեր: Սպենդիարյանական համերգներին էլ ընդգրկվում էին նրա գրեթե բոլոր սիմֆոնիկ երկերը, հատվածներ «Ալմաստ» օպերայից, երգեր, ռոմանսներ:

Մաեստրոյի նվագացանկում նշանակալի տեղ էին գրավում նաև արևմտաեվրոպացի և ռուս կոմպոզիտորների երկեր. Հայդնի, Մոցարտի, Բեթհովենի, Մենդելսոնի, Շումանի ստեղծագործությունների կողքին հնչում էին Բորոդինի «Դյուցազնական» սիմֆոնիան, Մյասկովսկու 16-րդ Սիմֆոնիան, Չայկովսկու սիմֆոնիկ գլուխգործոցները և կոնցերտները: Մենակատարներն էին Յակով Ֆլիերը, Հրաչյա Բոգդանյանը, Ավետ Գաբրիելյանը և այլ անվանի երաժիշտներ:

Օպերային թատրոնի դիրիժորի բեղուն ուղին - Գեորգի Երվանդովիչի անունը մեծապես կապված է նաև հայկական օպերային թատրոնի կայացման և զարգացման հետ: 25 տարի շարունակ մաեստրոն եղել է այս թատրոնի համար դիրիժոր-մեկնաբան, կատարողներին ուղղորդող և կրթող անխոնջ գործիչ, նոր ներկայացումների ստեղծման աջակից, որոշ դեպքերում՝ խմբագիր և համահեղինակ: 1932-ին թատրոնի բացումն սկսեց ստանալ իրատեսական ուրվագծեր, անգամ նշանակվեց առաջին տնօրենը՝ գրականագետ, թատերական գործիչ Մամիկոն Գևորգյանը, իսկ որպես դիրիժոր՝ Գևորգ Բուդաղյանը: Մինչ բուն թատրոնի բացվելը ներկայացումների համար հատկացված էր այսպես կոչված Աշխատանքային թատրոնը: Շենքն ուներ մի շարք անհարմարություններ, իսկ նվագախմբի համար հատկացված հատվածում կարող էր տեղավորվել միայն 35 հոգի: 1933-ին Երևանի օպերային թատրոնը բացվեց Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ներկայացմամբ: Որոշվեց օպերայի պրեմիերան ղեկավարելու համար հրավիրել Սամուիլ Ստոլերմանին, որը Թբիլիսիում և Օդեսայում արդեն առիթ էր ունեցել ղեկավարելու «Ալմաստ»-ի բեմադրությունները: Բուդաղյանը գործնականորեն պատրաստ աշխատանքը հանձնեց իր ավագ գործընկերոջը, և 1933-ի հունվարի 20-ին, Գորկու անվան բանվորական թատրոնում օպերայի երևանյան առաջնախաղը կայացավ հենց Ստոլերմանի ղեկավարությամբ: Արդեն 2-րդ ներկայացումից սկսած շուրջ 25 տարի «Ալմաստ»-ի դիրիժորը հենց Բուդաղյանն էր: Միևնույն օպերան ղեկավարել ավելի քան 300 անգամ և չձանձրանալ ու չձանձրացնել. սա բացառիկ երևույթ է: Ինչպես դիրիժորն է նշել իր հուշերում, յուրաքանչյուր նոր բեմադրության ժամանակ Սպենդիարյանի հանճարեղ պարտիտուրում ինքը գտնում էր կոմպոզիտորի նոր բացահայտվող, ասես թաքուն պահված մտքերը՝ անսահման գեղեցկությամբ և երաժշտական անկեղծությամբ լի:

Նույն 33-ին երիտասարդ մաեստրոն նախաձեռնեց Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայի բեմադրությունը, հաջորդ համերգաշրջանին՝ Պուչինիի «Չիո-չիո-սան»-ը: Հաջորդ տարիներին հայաստանյան հանդիսատեսի դատին հանձնվեցին Ռ. Լեոնկավալլոյի «Հպտիտներ»-ը, Հարո Ստեփանյանի նորավարտ «Քաջ Նազարը», Ի. Ի. Դերժինսկու «Խաղաղ Դոնը»: Խաղացանկում ավելացան նաև Ա. Տիգրանյանի «Անուշ», Հ. Ստեփանյանի «Լուսաբացին», Կ. Զաքարյանի «Մարջան», Ու. Հաջիբեկովի «Քյորօղլի», Զ. Փալիաշվիլիի «Դաիսի», Ժ. Բիզեի «Կարմեն» օպերաները, Ա. Խաչատրյանի «Երջանկություն» բալետը:

Գ. Բուդաղյանը դարձավ ՀԿՄ անդամ կազմակերպության ստեղծման առաջին իսկ օրվանից. նա մշտապես կապի մեջ էր երիտասարդ կոմպոզիտորների հետ, աջակցում էր նրանց, երբեմն շտկում պարտիտուրները:

Անհամբերությամբ սպասում էր, թե երբ է Արմեն Տիգրանյանն ավարտին հասցնելու «Դավիթ Բեկ» օպերան: Կոմպոզիտորն առողջական լուրջ խնդիրների պատճառով չկարողացավ կատարել օպերայի

9

Մենք հարուստ ավանդույթ ունեցող աշխարհում երաժշտություն ունենք, Կոմիտաս ունենք...

Հայ մեծանուն դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 91-ամյակի առթիվ

Չեքիջյան Հովհաննես Հարությունի (ծնվ. դեկտեմբերի 23, 1928, Ստամբուլ, Թուրքիա), խորհրդային երգչախմբային դիրիժոր, կոմպոզիտոր, մանկավարժ: ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ (1975) և Հայկական ԽՍՀ (1971) պետական մրցանակների դափնեկիր, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր (1982), ԽՍՀՄ ԳԽ 10-րդ և ՀԽՍՀ ԳԽ 9-րդ գումարումների պատգամավոր, Հայաստանի ազգային հերոս (2017)

1 Զրույցը ՀՀ ժողովրդական արտիստ, դասական և ժամանակակից խմբերգային արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակների դափնեկիր, պետական ազգային ակադեմիական երգչախմբի գեղարվեստական ղեկավար, դիրիժոր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի հետ է: Հարցազրույցն արծարծում է մեծանուն դիրիժորի մտորումները մշակութային, հասարակական, քաղաքական հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ:

- Ինքնատիպ, կատարողական բարձր վարպետությամբ է հագեցած խմբավարական Ձեր երկացանկը, անշուշտ, Ձեր ստեղծագործական բազմամյա աշխատանքում հետաքրքիր մտահղացումներ եք իրականացրել: Այսօր ինչ նոր ծրագրեր կան երգչախմբում:

- Վերջին շրջանում ավարտեցինք մի դժվարագույն հանձնարարություն, որը դրված էր երգչախմբի առաջ: Այն յոթմասանի սիմֆոնիա է, որը հեղինակի Պենդերեցկու ներկայությամբ բեմադրեցինք... Մի խոսքով, փառք ու պատվով կատարվեց այն, և կարճ ժամանակում հաղթահարվեց դժվարությունը մեր արտիստների քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Հիմա սկսելենք ձեր ծրագրերը թարգմանել, չկատարված որոշ ստեղծագործություններ ուզում ենք ներկայացնել իմ ծննդյան օրը դեկտեմբերի 23-ին: Այժմ աշխատում ենք այդ մենահամերգի վրա: Նշեմ նաև, որ ընթացիկ համերգներ միշտ էլ լինում են:

- Երգչախումբը չի՞ պատրաստվում մեկնել արտասահմանյան շրջագայությունների:

- Մենք հիմա պիտի լինեինք Միացյալ Նահանգներում, բայց... չգիտես ինչու ձգձգվեց: Այսինքն ես գիտեմ. թերևս պատճառն այն է, որ այնտեղի համայնքի հայերը վերջին շրջանում մի քիչ անհաշտ են... Բայց, այնուամենայնիվ հույս կա, որ դարձյալ կհրավիրեն և մինչև մարտ ամիս կմեկնենք:

- Հայերի անհաշտությունն ինչո՞վ է պայմանավորվում, քաղաքական անհանդուրժողականությամբ:

- Հիմա, ցավոք սրտի, որոշ կուսակցականներ իրար հետ, չունեն. Մինչդեռ ցանկալի է նրանք միմյանց աջակցեն, թև-թիկունք լինեն, հաշտ ու միասնական գործեն: Իհարկե, այս բոլորը կարևոր ազգապահպան գործոններ են, որոնք ոչ միայն դրսում ապրող հայ համայնքներին են վերաբերում, այլև այստեղ ապրողներիս:

Մենք ճկուն դիվանագիտության ուղղվածություն չունենք, հայտնի կարծիք է. մեր հարևան ազգն առավել դիվանագետ է:

- Անկասկած: Նրանք դիվանագիտության ասպարեզում շատ թրծված են ու խորամանկ: Գիտեք, զարմանալի «երևույթ» կա դրանց մեջ. նրանց փոքր երեխաները նույնիսկ դիվանագետ են:

- Թերևս հայերի մտածողությունն առավել լինելով՝ հոգեբանորեն ցածր է դիվանագիտության աստիճանը:

- Ոչ, ոչ, դիվանագիտության աշխարհը մի քիչ ուրիշ այլ աշխարհ է, որովհետև մենք կարծում ենք յուրաքանչյուրս կարող է դիվանագիտությամբ զբաղվել: Ամբողջ աշխարհում դիվանագետներն ունեն իրենց պրոֆիլն ու մտածելակերպը, իրենց օրենքները: Դիվանագետները երբեք ուղիղ բան չեն ասում, երբեմն ասում են և՛ այս, և՛ այն, այսինքն՝նրանցից ուղիղ բան չենք ակնկալում, նրանց ձեռագիրն այդ է: Մենք պիտի ուժեղ լինենք այնքան, որ մեր ուզած ձևով հասկանանք շատ բան: Մինչդեռ թուրքերը հենց իրենց ուզած ձևով հասկացնելու վարպետ են: Ու նաև իրենց ցանկությունները որպես իրականություն ներկայացնելու վարպետ են:

- Քանի որ քաղաքական ոլորտին «անցանք», թույլ տվեք հարցնել ի՞նչ տեսակետ ունեք հայ-թուրքական սահմանը բացելու խնդրում: Եվ տնտեսական համագործակցությունը երկու երկրների միջև արդյո՞ք միայն օգուտ կբերի մեր հասարակությանը:

- Հարցադրման պատասխանը պետք է թողնել դիվանագետներին: Բայց ես, իհարկե, անձամբ դրանց մեջ եմ մեծացել, կյանքի փորձ ունեմ, դրա համար փորձեմ որոշ բաներ ասել: Ահա և առաջին հայացքից հարց է ծագում ինչո՞ւ են թուրքերը փակել մեր սահմանը. որպեսզի մեզ համար վա՞տ լինի, որպեսզի չկարողանա՞նք «շնչել» և վերելք, առաջխաղացում չունենանք... Այս բոլորին հակառակ վերջին շրջանում մենք ունեցանք որոշ հաջողություններ, բայց այսօրվա ղեկավարությունը, կարծում եմ, արդեն հասկանում է, որ փակ դռներով աշխատելն այլևս անհնար է, պիտի ռիսկով առաջ տանել: Եթե բացվի սահմանը, դրանից մենք միայն պետք է օգուտ քաղենք, դա մեր տնտեսական հաջողության գրավականը կլինի և ճիշտ քայլը: Մենք պիտի ուրախանանք, որ թուրքերը վերջապես կանգնել են այնպիսի իրողության առաջ, որ Միացյալ Նահանգները, Ռուսաստանը, Եվրոպան միասին աշխատում են հօգուտ մեզ: Այս բոլորից մենք պիտի եզրակացնենք, որ մենք իրար չպիտի խանգարենք: Իհարկե, իմ կարծիքն այն է, որ կան և մտավախություններ, ռիսկի գնալ է դա: Պետք է մտածել ինչ է, հակառակ որոշումներ չե՞ն լինում. Մենք պիտի այնպես անենք, որ որոշումից մերը վերցնենք: Մենք ավելի դիմացինին ճնշելու գործոն ունենք, որ մեր կողմն ավելի շատ պաշտպանի աշխարհի հանրությունը, քան նրանց կողմը: Դե, ինչպես ասում են, սա ևս մի պայքար է:

- Պարոն Չեքիջյան, անդրադառնանք մեր բուն զրույցի թեմային: Հայ մշակույթի վիճակն այսօր ինչպե՞ս եք գնահատում:

- Բազմիցս եմ ասել եթե մենք մշակույթը վաղը կորցրեցինք, չենք հարատևի որպես ազգ: Մենք գոյատևել ենք մշակույթով և մեր մշակույթով ենք ընդմիշտ աշխարհին հայտնի եղել: Ես մտահոգվողներից մեկն եմ՝ մեր ազգի, երկրի վաղվա օրվա: Մենք պիտի պահպանենք մշակույթը, նրա մոլեռանդ պաշտպանը լինենք: Բայց այս հարցում, ինչպես այլ հարցերում, մենք շատ թույլ ենք, երբեմն մեզ բոլորովին չի մտահոգում, որ մեր երեխաները հեռուստատեսության առաջ նստած լսում են հայերեն խոսքերով, օտարահունչ երաժշտությամբ անարվեստ ստեղծագործություն... Դա իրենք ընդունում են որպես հայկական երաժշտություն... Այնինչ, մենք հարուստ արմատներ ունեցող երաժշտություն ունենք, Կոմիտաս ունենք, որն աշխարհը չունի... Ես մտահոգված եմ և ափսոսանքով եմ նշում, որ այդ դպրոցին հետևորդ չկա, մեր դպրոցներում երաժշտություն չեն դասավանդում, երեխան մեծանում է չիմանալով որն է ազգայինը, որը՝ օտարը: Ասածս վերաբերում է ոչ միայն երաժշտությանը, այլև պարարվեստին: Հայերը երբեք, ոչ մի անգամ այսպիսի ժեստեր, շարժումներ չեն արել, ինչ հիմա տեսնում ենք հեռուստատեսությամբ պարող կատարողների մեջ: «Հայկական» անվան տակ ամեն տեսակի պար են կատարում, այս բոլորի համար հեռուստաընկերությունների մեղքի բաժինը կա, նրանք այս ուղղությամբ մեծ դեր ունեն կատարելու: Քննադատությանը երբեմն իրենք պատասխանում են. «Այս են ուզում, պահանջն ավելի շատ է, մենք ունկնդրի ետևից ենք գնում»: Եվ կար ժամանակ, որ մենք ոչ թե ունկնդրի ետևից էինք գնում, այլև ունկնդրին բերում էինք մեր ետևից:

- Առավելապես երիտասարդներն են այդ ցածրորակ շոու-բիզնեսային պահանջարկով առաջնորդվում, միջին սերունդը միշտ էլ ասելիք ունեցող, ավելի լուրջ գործեր է ունկնդրում, որոնք համաշխարհային գլուխգործոցներ են:

- Հիմա երաժիշտները, ցավոք սրտի, ռաբիսներ են, հարսանիքներ նվագող զուռնան է, որոնք հայկական չեն բոլորովին, բայցևայնպես, դրանք են իշխող շերտերը, հիմա դրանց առաջ կարծես հնարավոր չէ կանգնել:

- Պարոն Չեքիջյան, թույլ տվեք հարցնել՝ 20-30 տարի անց Դուք տեսնո՞ւմ եք Ձեր ղեկավարած կապելլայի հետևորդ-ղեկավարին:

- Աշխարհի մեծերի կարծիքով դիրիժոր ծնվում են: Դիրիժոր հնարավոր չէ պատրաստել գրքերի, գիտելիքների միջոցով, այլ պիտի նա հատուկ շնորհ ունենա: Հիմա, դժբախտաբար, շատ տեղեր մնացին թափուր, օրինակ՝ Վարդան Աճեմյանի, Առնո Բաբաջանյանի, Արամ Խաչատրյանի տեղերը թափուր են... Ես չեմ տեսնում հիմա ինձ փոխարինող մեկին, որ իմ գործը կարողանա անել ինձ նման, որ իմ «ճիպոտը» հանձնեմ նրան... Եվ չնայած հավակնորդներ կան, որ կարծում են թե հեշտ է երգչախումբ ղեկավարելը...

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՓՈՒԶՅԱՆ
լրագրող,
«Մեծաց շարունակվող զրուցաշար. Զրույցներ, դիմապատկերներ, խոհեր...» գրքից

ԳԵՎՈՐԳ ԲՈՒԴԱՂՅԱՆԻ - 120- ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ

8 վերջնական խմբագրումը, աշխատանքն ամբողջացրեց ինքը՝ Բուդաղյանը, և 1950-ին օպերան բեմական կյանք ստացավ:

Ուշադրությունը կենտրոնացնելով հայ կոմպոզիտորների երկերի վրա՝ մաեստրոն չէր դադարում անդրադառնալ համաշխարհային օպերային գլուխգործոցներին. 46-ին նա ներկայացրեց Ն. Ռուբինշտեյնի «Դևը», օպերան, 49-ին՝ Լ. Դելիբի «Լակմե»-ն, որտեղ գլխավոր հերոսուհու դերերգն առաջին անգամ հայկական օպերային թատրոնում կատարեց Գոհար Գասպարյանը:

Հայկական բալետի պատմության մեջ էլ յուրօրինակ և կարևոր մի էջ բացեց «Խանդութ»-ը: «Սասունցի Դավիթ» էպոսի «Դավիթ և Խանդութ» գլխի բովանդակությամբ բալետի երաժշտության մեջ տեղ գտան հատվածներ Ա. Սպենդիարյանի առավել քան 60 երկերից՝ ռոմանսներից, գործիքային մանրանվագներից, սիմֆոնիկ կտավներից: Երաժշտական կոմպոզիցիան կազմած Գ. Բուդաղյանը «Խանդութ» բալետը ղեկավարելու առիթ ունեցավ շուրջ 100 անգամ:

ՀԽՍՀ Գերագույն Սովետի հրամանագրով Ա. Սպենդիարյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակումը ծրագրվեց 11 հատորներով, որպես խմբագիր էլ նշանակվեց հենց Գ. Ե. Բուդաղյանը: Նա իր մանկավարժական, վարչական և կատարողական գործունեությունից ազատ ժամանակը նվիրեց կոմպոզիտորի անտիպ ձեռագրերն ուսումնասիրելուն, ըստ ժանրերի համակարգելուն, բացթողումները խմբագրելուն, հրատարակված երկերը սկզբնաղբյուրի հետ համեմատելուն և լավագույն տարբերակն ընտրելուն: Սպենդիարյանի արվեստի հարուստ շերտերի բացահայտմանն էին ուղղված նաև մեծ երաժշտի մի շարք հոդվածները զանազան պարբերականներում և ծավալուն զեկույցները: Բուդաղյանի հետազոտական աշխատանքներում անդրադարձ է կատարվել նաև այլ ականավոր գործիչների: Նրա խմբագրությամբ հրատարակվել են Ռոմանոս Մելիքյանի «Զառ-վառ» և «Զմրուխտի» վոկալ շարքերը: Նա նաև սկսել էր նախապատրաստել Մելիքյանի լիակատար երկերի ժողովածուն, որը, ցավոք, մնաց անավարտ:

Մինչև 1978 թվականը՝ մահվան տարին, շարունակվում էր անխոնջ գործչի բազմակողմանի աշխատանքը: Գ. Բուդաղյանը նաև հասարակական և պետական գործիչ էր, մասնավորապես՝ 4 անգամ ընտրվել է քաղաքային և շրջանային սովետների դեպուտատ: Նրա մահվանից հետո էլ նվիրյալ գործունեությունը շարունակեցին կինը՝ ԵՊԿ պրոֆեսոր Նինա Սաղիյանը, որդին՝ երաժշտագետ, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Բուդաղյանը և դուստրը՝ լեզվաբան Ալմա Բուդաղյանը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՅԱՆ
երաժշտագետ,
Ա.Սպենդիարյանի տուն-թանգարանի գիտաշխատող

2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Անահիտ Սամսոնյան

Ապրիլի 6-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի նկուղը *«Ad libitum»* ազատ արվեստակիր ուսանողների նախաձեռնության և Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամի համագործակցության արդյունքում ցուցասրահի էր վերածվել: «Ազատությունը արվեստի միջոցով» խորագիրը կրող ցուցահանդեսում ցուցադրվեցին Հայաստանի 10 բուհերի ուսանողների աշխատանքներ:

Ցուցահանդեսին ներկայացված էին նաև նկարչուհի Անահիտ Սամսոնյանի նկարները:

Հոդվածը տես «Երաժիշտ» ամսաթերթի 4 (160) 2019 համարում

Խորվաթական երաժշտության երեկո

1

Առաջին անգամ Հայաստանում, հայ հանդիսատեսին, ներկայացվեց խորվաթական երաժշտություն. Խորվաթիայի Եվրոպական և արտաքին գործերի նախարարության բարձր հովանու ներքո տեղի ունեցավ երկու համերգ ,Երաժշտական ուղերձ Խորվաթիայից Հայաստանին՝ հեռավոր բարեկամինե խորագրով՝ Կլասյա Մոդրուշանի (սոպրանո) և Էվա Կիրխմայեր Բիլիչի (դաշնամուր, երգեհոն) մասնակցությամբ:

Ի սկզբանե հանդիսատեսին ջերմությամբ համակեց համերգի բանախոս, դաշնակահար Էվա Կիրխմայեր Բիլիչի՝ խորվաթական պատմության և մշակույթի, մասնավորաբար՝ երաժշտարվեստի ակնարկ - ցուցադրությունը, որտեղ նա ընդգծված գնահատանքով էր ներկայացնում հայ-խորվաթական պատմամշակութային առնչությունները: Հետաքրքրական էր ելույթում հատկապես հայ և խորվաթական մշակութային ազգակցությունների խնդիրը, որի հետագա և հանգամանալից ուսումնասիրության անհրաժեշտությունը ևս շեշտադրեց բանախոսը:

Էվա Կիրխմայեր Բիլիչի (երգեհոն), Կլասյա Մոդրուշանի (սոպրանո), Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը

Խորվաթիայի արտակարգ և լիազոր Դեսպան Ալեքսանդր Սունկո, ԵՊԿ կոմպոզիցիայի բաժնի 3-րդ կուրսի ուսանող Արամ Խանլարի

Ողջույնի խոսքով հանդես եկավ ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը

Էվա Կիրխմայեր Բիլիչի (դաշնամուր), Կլասյա Մոդրուշանի (սոպրանո), Երևանի պետական կոնսերվատորիայում

Առաջինը խորվաթական աշխարհիկ երաժշտության համերգ-դասախոսությունն էր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում:

Համերգին ներկա էին Հայաստանում Խորվաթիայի արտակարգ և լիազոր Դեսպան Ալեքսանդր Սունկոն, Հայաստանում Խորվաթիայի պատվավոր հյուպատոս Արտաշես Կազախեցյանը, ՀՀ-ում արտակարգ և լիազոր Դեսպաններ, հյուրեր ՀՀ Ազգային ժողովից և գերատեսչություններից:

Ներկաներին ողջույնի խոսք հղեցին Խորվաթիայի արտակարգ և լիազոր Դեսպան Ա. Սունկոն, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը:

Համերգին ներկայացվեցին խորվաթ կոմպոզիտորների վոկալ կամերային և դաշնամուրային ստեղծագործություններ: Կատարողների գեղարվեստական ապրումը՝ անսահման սերն ու խոնարհումը՝ առ հարազատ ազգային երաժշտարվեստը, մասնիկ առ մասնիկ փոխանցվում էր նաև ունկնդրին: Համերգի ավարտին երաժիշտներն անակնկալ մատուցեցին հանդիսատեսին. հնչեց Կոմիտասի «Չինար ես»ը: Գնահատելի էր առանձնահատուկ մասնագիտական-կատարողական խնամքը, որով Կլասյա Մոդրուշանը և Եվա Կիրխմայեր Բիլիչը մոտեցել էին կոմիտասյան երաժշտությանը:

Համերգի վերջում երաժիշտները հանձնեցին հուշանվերներ, հանդես եկան շնորհակալության խոսքով՝ ուղղված Խորվաթիայի Եվրոպական և արտաքին գործերի նախարարությանը, Հայաստանում Խորվաթիայի արտակարգ և լիազոր դեսպան Ա. Սունկոյին, կոնսերվատորիային՝ ի դեմս ռեկտոր Ս. Հովհաննիսյանի, ինչպես նաև ԵՊԿ Միջազգային համագործակցության և հանրային կապերի բաժնին՝ ի դեմս պրոռեկտոր Հասմիկ Հովհաննիսյանի:

Հաջորդիվ հանդիսատեսն ու հյուրերը շարունակեցին շփումն արդեն դահլիճի ճեմասրահում: Խորվաթական երաժշտարվեստի և մշակութային այլ խնդիրների շուրջ քննարկումները տևեցին մինչև ուշ երեկո:

Նշենք նաև, որ մինչև համերգը հյուրերը հնարավորություն էին ունեցել շրջելու կոնսերվատորիայով, Օպերային ստուդիայի, գրադարանի և ձայնադարանի, հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի միջոցով ծանոթանալու կոնսերվատորիայի ավանդույթներին և գործունեությանը:

«Երաժշտական ուղերձ Խորվաթիայից Հայաստանին՝ հեռավոր բարեկամին» խորագրով երկրորդ համերգը տեղի ունեցավ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը, որտեղ հնչեց խորվաթական հոգևոր երաժշտություն՝ մեներգեր՝ երգեհոնի նվագակցությամբ, երգեհոնային մենանվագ ստեղծագործություններ: Այսպես, կաթոլիկ երաժշտարվեստի մշակութային համատեքստում՝ ազգային երաժշտամտածողական շեշտադրումներով՝ խորվաթական հոգևոր երաժշտությունը ևս արժանացավ հանդիսատեսի ջերմ ընդունելությանը:

Այս համերգները հրաշալի սկիզբ դարձան Հայաստանի համար՝ բացահայտելու խորվաթ ժողովրդի հոգին՝ լուսավոր և խորունկ… Քանզի, ինչպես Կոմիտասն է ասում, երաժշտությունն է ամենեն մաքուր հայելին ցեղին…

Խմբագրական

վերցված է https://www.facebook.com/YerevanStateConsevatory/posts/2872525952771201 կայքից

“МОЯ ЦЕЛЬ – ВЫЗВАТЬ ИНТЕРЕС К КЛАССИЧЕСКОЙ МУЗЫКЕ”

Недавно в зале Степанакертского музыкального колледжа им. Саят–Новы состоялся сольный концерт Оганеса Карапетяна (бас).

В программе концерта прозвучали песни Комитаса, романсы П. И. Чайковского и С. В. Рахманинова, арии из опер В. А. Моцарта (“Дон–Жуан”), Дж. Россини (“Севильский цирюльник”), Г. Доницетти (дуэт из оперы “Дон Паскуале” в исполнении О. Карапетяна и Н. Варданяна), Ж. Бизе (“Пертская красавица”), С. В. Рахманинова (“Алеко”). В течение часа перед слушателем были представлены герои из комических опер, трагедийные и лирические образы. О. Карапетян с большим мастерством перевоплощался в образы исполняемых героев. Несмотря на то, что О. Карапетян является оперным артистом, ему подвластны и камерные жанры. Оганес признается, что любит петь романсы Ф. Шуберта, Р. Шумана, П. И. Чайковского, С. В. Рахманинова. Высокий профессионализм и личное обаяние, открытость и харизматичность певца позволили ему в считанные доли секунд завоевать публику, не спешившую уходить даже по окончании концерта. По признанию певца, все его концерты и мастер–классы направлены на то, чтобы повысить уровень вокального исполнительства в Арцахе и вызвать интерес у подрастающего поколения к классической музыке. Своими впечатлениями поделилась пианистка (концертмейстер) Надежда Акопян: *“Имея многолетний опыт работы с артистами – исполнителями как с местными, так и зарубежными, признаюсь, что с О. Карапетяном было легко и приятно сотрудничать. Талант и профессионализм молодого исполнителя вызывают неподдельное восхищение. Диапазон исполняемых Оганесом произведений очень широк, и сложность подготовки к концерту состояла именно в выборе произведений из этого огромного репертуара”.*

Оганес Карапетян родился 13 ноября 1996 года в городе Гюмри. В семье профессиональных музыкантов не было. Отец, Карапетян Мартирос Оганесович, по профессии менеджер (управленец), с начала 90–х годов – занимается предпринимательством. Мать, Карапетян Лусине Альбертовна, окончила факультет английского языка ЕГУ, более 30 лет преподает иностранный язык в общеобразовательной школе и колледже. Однако в свое время Лусине Альбертовна окончила музыкальную школу по классу скрипки. Дома находилось также фортепиано, часто звучала классическая музыка, и маленький Оганес вместе с младшим братом Мкртычем пробовал свои силы в музыке.

Окончив общеобразовательную школу N1 в 2013 году и следуя, ставшей почти семейной, традиции, О. Карапетян поступает в Ереванский государственный университет на юридический факультет. А дальше все происходит по иному сценарию.

Еще учась в школе, О. Карапетян проявляет незаурядные музыкальные способности. Первой на природную одаренность мальчика обратила внимание учительница русского языка. Она часто организовывала различные мероприятия, на которых Оганес исполнял русские романсы. Интересно, что учащийся сам подбирал репертуар исполняемых произведений. В XII классе О. Карапетян представляет свою школу на конкурсе–фестивале “Песня–мост дружбы” и “Звартноц”.

По совету Нарине Галоян О.Карапетян начинает обучаться вокалу у Еразик Арутюнян. Тогда начинающий певец с удовольствием пел в хоре и больших планов на будущее не строил. Однако Е. Арутюнян, заметив талант подопечного, в свою очередь посоветовала заняться профессионально “сольфеджио” с Ниной Минасян.

В 2014 году, со второго года обучения в ЕГУ О. Карапетян поступает в Ереванскую государственную консерваторию им. Комитаса на вокальное отделение в класс педагога, профессора Карине Мкртчян. Оганес часами занимается в свободных классах консерватории. С утра он посещает музыкальные занятия, а во вторую смену – ЕГУ. Отметим, что, будучи студентом ЕГУ, Оганес Карапетян принимает участие в Межвузовском фестивале песни “Студенческая филармония”, где обязательным было исполнение песен Комитаса, и в номинации “Армянская классическая песня” занимает первое место.

Распорядок дня был насыщен. Как студент, Оганес был перегружен, и как следствие, появились проблемы со здоровьем. И хотя от природы О. Карапетян был наделен феноменальной памятью, что позволяло ему в сжатые сроки успешно справляться с экзаменами, вкус к творческой атмосфере все же взял верх. Недолго думая, Оганес оставляет многообещающую карьеру юриста и останавливает свой выбор на профессии музыканта. Как покажет время, это был правильный выбор. У молодого артиста появляется возможность выступить с серьезной программой с ансамблем старинной музыки “Тагаран” под управлением Заслуженного деятеля искусств Армении Седрака Ерканяна: “Кофейная” кантата И. С. Баха, Оровелы в обработке С. Ерканяна и др. С заслуженной артисткой Армении, профессором ЕГК им.Комитаса, пианисткой Анаит Нерсесян начинающий вокалист исполняет четыре сольных концерта в Ереване. В 2016 году Оганес Карапетян принимает участие в VII Республиканском конкурсе оперных певцов им. Татевик Сазандарян и удостаивается специального приза “Премия надежды”как самый молодой исполнитель. На II Международном конкурсе молодых вокалистов им. Нодара Андгуладзе (2017г.), прошедшем в Тбилиси, получает вторую премию. По приглашению О. Карапетян выступает в ряде зарубежных стран – Чехии, Италии, Австрии, Словакии, Болгарии, Турции и др.

Окончив бакалавриат с отличием, О. Карапетян был призван на срочную службу в ряды действующей Армии обороны Арцаха. Успешно сдав соответствующий экзамен, Оганес вскоре был принят в военный ансамбль “Аспет” Армии обороны Арцаха. Ансамбль принимает активное участие не только в мероприятиях, организованных воинскими частями, но также в общественной жизни Арцаха. Так, О. Карапетян исполнил “*Requiem*” В. А. Моцарта с Государственным камерным хором “Мракац” (худ.рук.– засл.деят. иск. Марине Месропян); Мессу до–минор В. А. Моцарта, произведения Г. В. Свиридова с Государственным хором Арцаха (худ.рук.– засл.деят.иск. Нина Григорян). О. Карапетян также проводит методические занятия в ДМШ им. Комитаса.

У Оганеса Карапетяна есть большая мечта – выступить на сцене главного музыкального театра Нью–Йорка Метрополитен–опера. О. Бальзак говорил: “Чтобы дойти до цели, надо прежде всего идти”.

НИНА ВЛАДИМИРОВНА АКОПЯН

музыковед, Степанакерт (НКР)

ԵՊԿ երգեցողության բաժնի պրոֆեսոր Ռեբեկա Օզախյանի 2019 թվականի գործունեությունը

Սարգիս Զահաբի, կոնցերտմայստեր Գայանե Թորոսյան Նարեկացու արվեստի միությունում Սարգիս Զահաբիի մենահամերգին

Կարինե Սիմոնյան, Ռեբեկա Օջախյան, Կարինե Աղաջանյան, Գայանե Թորոսյան «Ալյանս Ֆրանսեզ»ում, ֆրանկոֆոնիայի շրջանակներում կայացած համերգին

Ռեբեկա Օջախյան, Կարինե Սիմոնյան Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում, մայրերի օրվան նվիրված համերգին

Զվարթնոց-Վերածնունդ երգի մրցույթ-փառատոնի հիմնադիր կազմակերպիչ Սուսաննա Բաղդասարյան, նույն մրցույթ-փառատոնի հանձնախմբի նախագահ ԵՊԿ պրոֆեսոր Ռեբեկա Օջախյան

1 Փետրվարին, գերմանացի երգչուհի Ուլրիկե Զոնթակի վարպետության դասերին մասնակցեցին Հեղինե Խաչատրյանը (4-րդ կուրս), միջազգային մրցույթների դափնեկիր Հասմիկ Վարդանյանը (մագիստրոսական 2-րդ կուրս):

Կարինե Սիմոնյան, Անահիտ Ներսեսյան, Ռեբեկա Օջախյան, Տիգրան Չուխաջյանի անվ. երաժշտական դպրոցում, համերգից հետո

Հասմիկ Վարդանյան, կոնցերտմայստեր Գայանե Թորոսյան Գերմանացի երգչուհի Ուլրիկե Զոնթագի վարպետության դասընթացից հետո կայացած համերգին

Հեղինե Խաչատրյան Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում, մայրության օրվան նվիրված համերգին

Եվ մարտին համերգ եղավ՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 150 ամյակին: Մասնակցում էին Իզաբելլա Ավանեսյանը, Կարինե Աղաջանյանը, Կարինե Պետրոսյանը Ռիտա Պետրոսյանը և Սուսաննա Հակոբյանը:

Ապրիլին համերգ մայրության տոնի առթիվ:

Մայիսին տեղի ունեցավ 4-րդ կուրսի ուսանող Սարգիս Զահաբիի համերգը: Նաև միջազգային մրցույթի դափնեկիր Կարինե Սիմոնյանի մենահամերգը Տիգրան Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցում:

Հունիսին Ֆրանսիական երաժշտության երեկոյով ավարտվեց գարնանային կիսամյակը:

Սեպտեմբերի համերգին մասնակցեցին Ալիանս Ֆրանսեզում (Սերինե- Լյուբա Թադևեսյանի հետ կազմակերպած) Ռիտա Պետրոսյանը, Կարինե Աղաջանյանը, Կարինե Սիմոնյանը:

Գլագոյի «Ռոյալ օպերայի» մասնագետների լսումները Երևանում, որին մասնակցեց ուսանողուհի Հեղինե Խաչատրյանը:

Եվ Ռեբեկա Օջախյանը հանդես է եկել որպես «Զվարթնոց-Վերածնունդ» մրցույթ-փառատոնի հանձնախմբի նախագահ:

ՌԵԲԵԿԱ ՕՋԱԽՅԱՆ
ԵՊԿ պրոֆեսոր

Լուսինե Գրիգորյանի կատարողական արվեստը

Լուսինե Գրիգորյան, Պոլ Գրիֆիթի

1 Լուսինե Գրիգորյանը ծնվել է Գյումրիում: Սովորել է Գյումրիի Կարա-Մուրզայի անվ. երաժշտական ուսումնարանում՝ Ադա Սանոյանի դասարանում, որից հետո Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժնում, այնուհետ ասպիրանտուրան՝ Ռոբերտ Շուգարովի ղեկավարությամբ: Բազմաթիվ համերգներով հանդես է եկել Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Շվեցարիայում, Ավստրիայում, Լեհաստանում, Ամերիկայի ՄիացիալՆահանգներում, Պորտուգալիայում, Լիբանանում, Ավստրալիայում: Որպես մենակատար հանդես է եկել այնպիսի հեղինակավոր փառատոններում, ինչպիսիք են Հոլանդ ֆեստիվալ (Ամստերդամ), Բոզաղ (Բելգիա), Նոստալգիա (Լեհաստան), Քեմբերա ֆեստիվալ(Ավստրալիա) և այլն: 2015 թվականին Շվեցարիայի Լուգանո ռադիոստուդիայում ձայնագրել է Կոմիտասի բոլոր դաշնամուրային ստեղծագործությունները, որը հրատարակվել է 2017 թվականին, գերմանական հանրահայտ *ECM records*-ի կողմից: Այս սկավառակը և Լուսինե Գրիգորյանի կատարողական արվեստը բարձր են գնահատել այնպիսի հեղինակավոր պարբերականներ, ինչպիսիք են՝ *BBC music magazine*, *Gramophone*, *Klassik Akzente*, *Crescendo* և այլն: «Արբեցած զուլալությամբ». այսպես է բնութագրում Գրիգորյանի կատարումը *Klassik Akzente* գերմանական երաժշտական ամսագիրը: *«Լուսինե Գրիգորյանը վայելում է երաժշտության ծգողականությունը: Նա գիտի խորասուզվել այս գանձերի մեջ՝ստեղծելով գեղեցիկ ձայներ»*: Բրիտանացի գրող, երաժշտական քննադատ Պոլ Գրիֆիթի խոսքերով, Լուսինե Գրիգորյանի նվագը *«առեղծվածային ներկայություն»* է՝ Կոմիտասի երաժշտության նման: 2019 թվականը նույնպես հագեցած էր հետաքրքիր համերգային շրջագայությամբ: Սեպտեմբերի 21-ին ելույթ ունեցավ Պորտուգալիայում՝ Գյուլբենկյան համերգասրահում, նվիրված մեծ բարերարի՝ Գյուլբենկյանի 150 ամյակին: Այնուհետ շրջագայությունը շարունակեց ԱՄՆ, համերգներ ունենալով Նյու Յորքում, Չիկագոյում և Լոս Անջելեսում: Լուսինե Գրիգորյանի փոխանցմամբ, այս տարվա կարևորագույն իրադարձություններից է նոյեմբերի 19-ի համերգը Մյունխենում: «Գյոթե» կենտրոնի հրավերով, Մյունեխենի հանրահայտ *BR Klassik* ռադիոյի հետ համատեղ, կազմակերպվել էր 2 մասից կազմված միջոցառում, առաջին մասում համերգ, երկրորդ մասում համերգ-զրույց հայ մշակույթի շուրջ, բանախոսներից էին կոմպոզիտոր մեր ընթերցողին քաջածանոթ և ԵՊԿ շրջանավարտներ՝ Դավիթ Հալաջյանը և դաշնակահար Վարդան Մամիկոնյանը: Երկու ժամանոց այս հրաշալի ծրագիրը հայ մշակույթի մասին Եվրոպայում հեռարձակվելու է 2020 թվականի հունվարի 11-ին *BR Klassik* ռադիոյի եթերում: Այնուհետ համերգ ունեցավ Բելգիայում, կատարելով հայ կոմպազիտորների՝ Դավիթ Բալասանյանի, Արթուր Ավանեսովի, Տիգրան Մանսուրյանի և Կոմիտասի ստեղծագործությունները: Շրջագայությունը եզրափակեց Բրեմենի «Սենդեսսալ» համերգասրահում, որը Եվրոպայի լավագույն ակուստիկա ունեցող սրահներից մեկն է, որտեղ համերգներ և ձայնագրություններ են ունեցել բազմաթիվ հանրահայտ դաշնակահարներ: Սրահի տնօրեն Պիտեր Շուլցը, ով աշխատել և ձայնագրել է նաև Ալֆրետ Բրենդելին, շատ բարձր գնահատեց Լուսինե Գրիգորյանի կատարողական արվեստը:

Լուսինե Գրիգորյան
դաշնակահար

Վերջնագրություն

Կար ժամանակ,որ նյարդայնանում էի քեզ ուրիշի կողքին տեսնելուց.երբ բռնում էիր նրա ձեռքը ու ճեմում անհոգ և երջանիկ: Ինչ մեղքս թաքցնեմ, այդ ժամանակ թթվածինը չէր հերիքում, հևում էի անվերջ ու զգում, որ իմ վերջին սերը դու ես լինելու:

Ես կայի,ապրում էի,բայց դու ինձ չէիր նկատում, կամ կողքիդ էի, բայց և միևնույն ժամանակ չկայի: Անտեսանելի էի կամ էլ՝ եմ: Ես չէի չարանում, շարունակում էի նայել քեզ, որսալ հայացքդ ու երջանկանալ, որ գոնե մի պահ ինձ նայեցիր, զգալ տաքությունդ, շունչդ ու պատկերել քեզ իմ երազներում կողքիս:

Այսօր այլևս քեզ չեմ սպասում: Հանել եմ սրտիցս ու բաց եմ թողել՝ հավատալով, որ օրերից մի օր գուցե ետ նայես, այս անգամ էլ դու որսաս հայացքս...

Այդ օրը ցուրտ կլինի: Դող կզգաս մեջքիդ վրայով ու, ցավոք սրտի, ես այդտեղ չեմ լինի, որ թեյ տամ քեզ: Այդ օրն առաջին անգամ կհասկանաս, որ այլևս չես կարող ինձ հետ խոսել երազանքներիդ, կարծատև սերերիդ ու նրանց կողմից մերժվելուդ մասին: Այդ օրը նորից քո մեջ լույս կծնվի, այն, որ վաղուց կար, բայց մարել էր: Կնստես դաշնամուրի առաջ ու կսկսես ավարտել վաղուց կիսատ թողած քո մեղեդին: Վախենամ՝ այդ օրը տխրես, ժպտաս դառը ու հառաչես: Վախենամ՝ այդ օրը վերջին անգամ տեսնես արևին ամպերի ետևից դուրս գալիս:

Հրաժեշտից առաջ կբացես տան բոլոր պատուհանները, կփակես աչքերդ ու կշնչես դեկտեմբեր ամսվա սառնությունը:

Այսօր՝ դեկտեմբերի 17-րդ օրը, ես մեռնում եմ: Դանդաղ տանում եմ ինձ հետ երազներս ու թաքուն պահած սերս: Մայրամուտիս զգում եմ տաքություն՝ իմ տան բաց պատուհաններից ներս թափանցող քո տաք շնչառությունը...

Հիմա մենք հևում ենք միասին:

ԼՈՒՍԻԿ

Կարոտ

Կարոտել եմ քո պատկերին
Քո աչքերին քո սիրուն
Ժամը տարի օրն է մի դար
Ինձ թվում այս աշխարհում:

Կարոտել եմ համբյուրներիդ
Շրթունքներիդ վարդաշող,
Նուրբ ձեռքերիդ, քնքուշ սրտիդ
Վառ ծիծաղին քո անուտ:

Կարոտել եմ քեզ կարոտել քեզ,
Թեժ կարոտից անդադար
Սիրտս է զարկում Սև ծովի պես
Քեզ եմ կանչում ու՞ր ես, յար:

ԼԱՉԻՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Հայկական բանակի պահեստի սպա՝ մայոր,
ԵՊԿ փականագործ, հեպահույզ

Նոր տարվա երազանք

Նոր օր բացվեց,Նոր տարի
Կյանքս լցվեց սիրով լի
Անակնկալներ բարի
Ու նվերներ հաճելի:

Ա՜խ, երանի այս տարի
Երազանքս կատարվի,
Խաղաղություն թող լինի
Մեր սահմանում զինվորի:

Նոր տարին թող լույս բերի
Ծնողներին հույս բերի,
Զավակներին տուն բերի
Երջանկություն պարգևի:

ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ
Արմավիրի քաղաքապետարանի երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժնի 5-րդ դասարանի աշակերտ, 16 տարեկան

Յովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակներին ընդառաջ «ԵՊԿ հրատարակչությունը» մեծ բանաստեղծի ծննդյան օրերին՝ սեպտեմբերին կազմակերպեց «Վերնատուն», որի մասնակիցները երաժիշտներ էին, սակայն ունեին իրենց հոբիները՝ գրական, գեղանկարչության ասպարեզում: Կազմակերպվեցին ցուցահանդեսներ և գրական գործունեությունը տպագրվեց «Երաժիշտ» ամսաթերթի էջերում: Շարունակվում են «Վերնատուն» հանդիպումները հրապարակային նյութերով.

Խմբագրական

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

❖ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի և Եվրոպական համալսարան հիմնադրամի միջև կնքվեց փոխըմբռնման հուշագիր՝ մշակութային, գիտական և կրթական կապերի հաստատման, կրթական և հետազոտական ծրագրերի համատեղ իրականացման նպատակով:

Երկու բուհերը կհամագործակցեն կրթության կազմակերպման, վերապատրաստման և վերարտակավորման, համատեղ հետազոտական գործունեության, էրազմուս+ ծրագրերին դիմելու և բուհական այլ գործընթացների շրջանակներում:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

❖ Դեկտեմբերի 6-ին ԵՊԿ պրոֆեսոր **Դավիթ Ղազարյանին** Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի Ամենայն Հայոց Կաթողիկոսի և հոգևորականության կողմից շնորհվեց «Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ» բարձր շքանշան:

❖ Դեկտեմբերին կայացավ AAD.AM 10-րդ հոբելյանական մրցանակաբաշխությունը: «Հայրենիքի նվիրյալ զավակ» անվանակարգին արժանացավ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր **Արամ Սաթյանը**: Հայ երաժշտարվեստում ներդրած ավանդի համար մրցանակի արժանանացան ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, քանոնահարուհի **Հասմիկ Լեյլոյանը** և ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, դուդուկահար **Գևորգ Դաբաղյանը**: Սիմֆոնիկ և ջազային արվեստում ներդրած ավանդի համար մրցանակի արժանանացավ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, կոմպոզիտոր **Նարինե Զարիֆյանը:** Հայ մշակույթում ներդրած ավանդի համար մրցանակի արժանացավ հայ մասնագիտական երաժշտական մամուլի հիմնադիր երաժշտագետ **Գոհար Շագոյանը:**

❖ Ակադեմիական երգեցողության բաժնի՝ բակալավրական կրթության 4-րդ կուրսի ուսանող **Նավասարդ Հակոբյանին** (պրոֆեսոր Ս. Կոլոսարյան)՝ ԿԳՄՍՆ «Լավագույն ուսանող» մրցույթի հաղթողի և դաշնամուրային բաժնի մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանող **Լյուսյա Շահնազարյանին** (պրոֆեսոր՝ Ռ. Թանդիլյան)՝ ԿԳՄՍՆ «Լավագույն ուսանող» մրցույթի հաղթողի կոչմանն արժանանալու համար

❖ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ, միջազգային մրցույթների դափնեկիր, արվեստագիտության թեկնածու, դաշնակահարուհի **Լիլիթ Արտեմյանը** 2019թ. սեպտեմբերի 22-ին որպես պատվավոր հյուր ելույթ է ունեցել Նյու Յորքի հռչակավոր «Քարնեգի հոլ» համերգասրահում: Կոմիտասի 150-ամյակին նվիրված համերգին նա կատարել է Կոմիտասի, Տիգրան Չուխաճյանի, Էդվարդ Բաղդասարյանի Կոնստանտին Պետրոսյանի և արևմտաեվրոպական կոմպոզիտորների դասական դաշնամուրային ստեղծագործությունները: Համերգն ունեցել է մեծ հաջողություն: Լիլիթ Արտեմյանն արժանացել է հատուկ պատվոգրի և ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության Դեսպանի շնորհակալագրին:

Լիլիթ Արտեմյան

Պատրաստեց՝ **ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ**

2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

ԵՊԿ ուսանողների համերգային մեկնարկը կոնսերվատորիայի այգում, Վարդապետի ծննդյան օրը, նվիրված Կոմիտասի ծննդյան 150-ամյակին, 26.09.2019 թ.

Սանկտ-Պետերբուրգից ԵՊԿ գրադարանին, որպես ժառանգություն թողած հեղինակից ԵՊԿ-ին հանձնեցին ևս մեկ գիրք՝ Ն. Ռիմսկի- Կորսակովի անվ. կոնսերվատորիայի երաժշտական քննադատության ամբիոնի բազմավաստակ պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու, ՌԴ Կոմպոզիտորների միության անդամ էռա Սուրենի Բարուտչևայի ***«О магии бегущего времени и о себе»*** *վերջին հրատարակությունը: Այն հանձնեցին Հայաստան ժամանած էռա Բարուտչևայի քույրը ամուսնու հետ միասին*

Rehearsing and performing at the Prague Academical Parish Church of the Most Holy Saviour, 16 December, 2019.

Եվրոպայում ճանաչված դիրիժոր կիպրահայ, սակայն գործով կայացած Չեխիայում արվեստագիտության դոկտոր Հայկ Ութիճեան: Այս ամռանը նա մասնակցում էր Մատենադարանի Գրիգոր Նարեկացի միջազգային գիտաժողովին

Կոնստանտին Օրբելյանի հրավերով Հայկական Բարեգործական ընդհանուր միության Բարի կամքի Դեսպան, օպերային երգչուհի, լեզվաբան, Ֆրանսերեն լեզվի փորձագետ-ուսուցիչ Սերինե-Լյուբա Թադևոսյանը ժամանելով Մոսկվայից, օպերայում աշխատել է Հայաստանում ժյուլ Մասնեի «Մանոն» օպերայի բեմադրությունում, որպես ֆրանսերեն լեզվի հրավիրված մասնագետ: Նա նաև աշխատեց ԵՊԿ երգեցողության բաժնի ուսանողների հետ, որպես ֆրանսերեն լեզվի մասնագետ: Արդյունքում պատրաստեցին Ֆրանսիացի կոմպոզիտորների ստեղծագործություններից կազմված մի շարք համերգներ, Ֆրանկոֆոնիայի շրջանակներում, որոնցից եզրափակիչը տեղի ունեցավ «Ալյանս Ֆրանսեզում»

Յուրի Սուվարյան (համակարգող պատասխանատու ակադեմիկոս), Հովհաննես Այվազյան, Ռոբերտ Ամիրխանյան, <...> Արամ Սաթյան, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան և «Հայկական հանրագիտարան» հրատարակչությունը (գլխավոր խմբագիր՝ Հովհաննես Այվազյան) պետական պատվերով լույս ընծայեցին «Հայ երաժշտության հանրագիտարանը» աշխատությունը: Սեպտեմբերի 26-ին, Կոմիտասի ծննդյան օրը տեղի ունեցավ շնորհանդես ՀՀ ԳԱԱ ակադեմիայի դահլիճում

Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ, Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ Կոմիտասի ծննդյան 150-ամյակի հանդիսավոր բացման արարողության ժամանակ Ա. Սպենդիայրյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում

Կատարողական արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ Լիլիթ Եփրեմյանը Միջառարկայական մասնագիտացման կենտրոնի բացմանը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ակադեմիկոս Լևոն Աբրահամյանի վարպետության դասին, ԵՊԿ ակուստիկ լաբորատորիայում, 19.04.2019 թ.

2019 թվականի «Վահան Թեքեյան» մրցանակակիրներ՝ Արա Հակոբյան, Սոֆա Ազնաուրյան, Արծվի Բախչինյան, Բախտիար Հովակիմյան

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտասի անվ. ԵՊԿ ՊՈԱԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՋՅԱՆ, ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

Գլխավոր խմբագիր՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝ ԳՈՀԱՐ ՇԱԳՈՅԱՆ

Խմբագիրներ՝ ԳՐԻԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (հայ),
ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (ռուս.)

Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՀԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին:
Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 12 էջ: Ստորագրված է 25.12. 2019:
Գինը 200 դրամ: Տպաքանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է բացառապես «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ՁԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրություն նշված հասցեով.

0001, ք.Երևան, Սայաթ-Նովա 1ա
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/